

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ե՞րբ եւ Ի՞նչպէս Պէտք է Կազմակերպուին Յաջորդ Ընտրութիւնները

Նախագահ Արմէն Սարգսեան ծաւալուն յօդուած մը հրապարակած է, ուր արտահայտուած կը կատարէ վերջին տասնամեակներուն Յայաստանի ծախողութիւններուն, որոնք հանգեցուցին վերջին պատերազմի ընթացքին կրած պարտութեան: Ներկայ իրավիճակէն դուրս գալու ուղղութեամբ ան կ'առաջարկէ արտահերթ ընտրութիւններու կայացումը, որ պէտք է յաջորդէ Ընտրական Օրէնսգրքի եւ Սահմանադրական որոշ դրոյթներու փոփոխութեան: «Մինչ այդ, իշխանութեան օրինական, հաւասարակշռուած եւ անաչառ ճիւղերից մէկի՝ նախագահի ինստիտուտի օգնութեամբ պէտք է ձեւաւորուի Ազգային համաձայնութեան կառավարութիւն», կը գրէ Արմէն Սարգսեան:

Պատերազմի ավարտէն անմիջապէս ետք նախագահ Սարգսեան միանալով վարչապետի հրաժարականի պահանջով ընդդիմադրութեան կոչերուն, դժբախտաբար կորսնցուց «անաչառ ճիւղերից մէկը» ըլլալու այդ կարեւոր հանգամանքը: Այս պատճառաւ իսկ Սարգսեանի միջնորդական քայլերը որոշ չափով դատարկ կը հնչեն այսօր:

Գալով բուն հարցին, թէ երբ տեղի պէտք ունենան խորհրդարանական ընտրութիւնները, նախագահի կարծիքը նոյն է, ինչ որ կ'առաջարկէ վարչապետ Փաշինեան: Երկուքն ալ կը խօսին արտահերթ ընտրութիւններու մասին, որոնք կրնան տեղի ունենալ օրէնսդրական որոշ փոփոխութիւններէ ետք եւ տրամաբանական ժամկետներու մէջ՝ հաւանաբար համավարակը յաղթահարելէ ետք:

Քաղաքական շրջանակները բոլորն ալ գրեթէ համակարծիք են որ, ներքին քաղաքական տագնապի հանգուցալուծումը կրնայ տեղի ունենալ միայն ընտրութիւններու միջոցաւ, քանի որ անկէ դուրս որեւէ այլ եղանակ երկիրը կը տանի կործանումի: Այսուհանդերձ, գլխաւոր հարցը կը մնայ այն, թէ ինչպիսի կառավարութիւն պէտք է կազմակերպէ յաջորդ ընտրութիւնները:

Ընդդիմադիրներու ստեղծած «Ազգային Փրկութեան Շարժումը» կը պահանջէ, որ իրենց թեկնածուն՝ Վազգէն Մանուկեանը խորհրդարանի կողմէ ընտրուի վարչապետ եւ իր գլխաւորած կառավարութիւնը կը խոստանայ

Մոսկուայի Մէջ Կայացած Փութին-Փաշինեան-Ալիեւ Զանդիպուծի Աւարտին Ընդունուեցաւ Փոխադրային Միջանցքներու Մասին Յայտարարութիւն

Յունուար 11-ին, Մոսկուայի մէջ կայացաւ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու հանդիպում, որու ընթացքին ստորագրուեցաւ նոր յայտարարութիւն՝ փոխադրային միջանցքներու մասին:

Հանդիպումի ավարտին կայացած համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին Իլհամ Ալիեւ շեշտեց, որ դարաբաղեան ինդիքը այսուհետ պատմութիւն է: Իսկ Նիկոլ Փաշինեան ընդգծեց, որ ինդիքը, ի հարկէ, կարգաւորուած չէ եւ հարցերէն մէկը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է, եւ որ Հայաստան պատրաստ է շարունակել բանակցութիւնները այս հարցի շուրջ ԵԱՀԿ Մինսքի շրջանակի ծիրէն ներս:

Հայաստանի վարչապետը նաեւ ընդգծեց, որ ցաւօք չէ յաջողուած կարգաւորել նաեւ գերիներու հարցը: Սակայն ասոր հետ մէկտեղ Փաշինեան ընդգծեց, որ Յունուար 11-ին ստորագրուած համաձայնագիրը չափազանց կարեւոր է: Այս պահուն կարելի է ըսել, որ երկրորդ եռակողմ յայտարարութիւնը կը վերաբերի Նախիջեւանի միջանցքին, մանրամասնութիւնները, սակայն, յայտնի չեն:



Քրեմլինի մէջ կայացած Փութին, Փաշինեան եւ Ալիեւ հանդիպումի ընթացքին

Քրեմլինին մէջ կայացած վլատիմիր Փութին-Փաշինեան-Ալիեւ եռակողմ հանդիպումը տեւած է մօտ չորս ժամ: Այս Հայաստանի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի առաջին հանդիպումն էր պատերազմէն յետոյ: Բանակցութիւններու մեկնարկին, Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութին գոհունակութեամբ ընդգծեց, որ Նոյեմբեր 10-ին ստորագրուած հրադադարը կը պահպանուի, իսկ համաձայնագրի կէտերը հետեւողականօրէն կ'իրագործուին: Փութինի խօսքով, Մոսկուայի օգնութեամբ պատերազմէն յետոյ Ղարաբաղ վերադարձած է շուրջ 48 հազար փախստական: Ռուսաստանի օգնութեամբ տեղի ունեցած է գերիներու եւ զոհուած-

Թրամփը Պաշտօնագրկելու Երկրորդ Գործընթացը Գոնկրտէն Ներս



Նախագահ Թրամփի աջակիցները Քափիթուի շէնքին վրայ յարձակումի ընթացքին

Ամերիկեան Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տունէն ներս սկսաւ նախագահ Տրամփի պաշտօնագրկումի երկրորդ գործընթացը, որպէս հետեւանք Յունուար 6-ին, Քափիթուի շէնքին վրայ կատարուած յարձակումին՝ Թրամփի աջակիցներուն կողմէ, որոնք կը շարունակեն հաւատալ, որ նախագահական ընտրութիւնները գողցուած են Թրամփին, հա-

կառակ որ բոլոր մակարդակներու ատուգումները եւ դատական գործերը եկան հաստատելու, որ ընտրութիւնները անցած են առանց խախտումներու: Ներկայացուցիչներու Տան Դեմոկրատ մեծամասնութեան առաջարկած պաշտօնագրկումի բանաձեւը կ'ամբաստանէ երկրի նախա-

Սահացած է Տոքթ. Կարախո Տէր Եղիայեանը



Լոս Անճելըսի մէջ մահացած է յայտնի հասարակական գործիչ եւ կրթական մշակ Տոքթ. Կարախո Տէր Եղիայեանը, որ վերջերս վարակուած էր «Քորոնա» ժահրով: Տոքթ. Տէր Եղիայեան հիմնադիր նախագահն էր Մաշտոց Գոլէճի եւ երկարամեայ բեղուն գործունէութիւն ծաւալած էր համայնքէն ներս: Այս առթիւ «Մասիս» իր շրջանակի անունով խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնէ հանգուցեալի այրիին ու բոլոր հարազատներուն:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

**Անցնող Տարուան Արհաւիրքների
Հետեւանքները Հնարաւոր Է
Յաղթահարել Միայն Համահայկական
Ձանքերով**

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

2020 թուականը Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւնների պատմութիւնում կը յիշատակուի որպէս մեծ ցնցումների տարի: Հայկական երկու պետութիւններն այս տարի ստիպուած եղան դիմակայելու երկու համամարդկային աղէտի՝ թագավարակին եւ Թուրքիայի ծաւալապաշտական գործողութիւններին: Երկու դէպքում էլ էական հարուած հասցուեց մեր սոցիալ-տնտեսական համակարգին, ռազմական ներուժին: Այս խնդիրները կը լուծուեն, կը վերականգնուեն տնտեսական կորուստները, սոցիալական վիճակը, ռազմական ներուժը, բայց անդուստնալի կը մնան մարդկային կորուստները: Երկու աղէտները միասին մեր ժողովրդից խլեցին 6000-ից աւելի կեանքեր: Հիմնա հարցերը դեռ անցեալում չեն, դեռ ունենք գերիների, անհետ կորածների կարեւորագոյն խնդիրներ, միւս կողմից էլ՝ համավարակը շարունակում է ամէն օր քաղաքացիների նոր կեանքեր խլել:

Երկու աղէտը էական ազդեցութիւն թողեցին նաեւ տնտեսութեան վրայ: Նախնական գնահատականներով՝ այս տարի տնտեսական անկումը կը կազմի 9 տոկոս: Եթէ ողջ աշխարհի տնտեսութիւնը զգաց միայն համավարակի բացասական ազդեցութիւնը, ապա Հայաստանի եւ Արցախի դէպքում գումարուեց նաեւ պատերազմը: Բացասական դարգացումներն իրենց օրինաչափ ազդեցութիւնը թողեցին նաեւ դրամի փոխարժէքի վրայ: Այն էականօրէն արժեզրկուեց, ինչն իր հետ բերեց նաեւ որոշակի ապրանքների գների աճ: Գնաճը կարգաւորող լիազօր մարմնի՝ ԿԲ գնահատականներով, այն կազմում է 1.6 տոկոս, որը թոյլատրելի սահմաններում է: Ըստ գլխաւոր դրամատան տնտեսական հաշուարկների՝ գնաճի վերին շեմը 4 տոկոս է, որի հատելուց յետոյ Կեդրոնական պանքը կը միջամտի:

Նոր՝ 2021 թուական ենք մուտք գործում ծանր խնդիրներով: Հայաստանին եւ Արցախին դժուարին աշխատանքներ են սպասուում տնտեսութեան վրայ պատերազմի եւ համավարակի հետեւանքները վերացնելու ուղղութեամբ: Կոտակուած հիմնահարցերը լուծելու համար առաջնային անհրաժեշտութիւն է տնտեսական դրական ցուցանիշների ապահովումը: Դրան հասնելու ուղիներից մէկը՝ դէպի երկիր ներդրումների հոսքի աւելացումն է, իսկ այն հնարաւոր է ապահովել բացառապէս միայն կայուն եւ կանխատեսելի ներպետական միջավայր ձեւաւորելու միջոցով:

Հանրապետութեան սոցիալ-տնտեսական իրավիճակի վրայ թագավարակի ազդեցութիւնը նուազեցնելու համար դրա դէմ պատուաստուելն այլ ընտրանք չունի: Գալիք տարի այդ ճանապարհով կը գնան բոլոր երկրները, եւ շատ կարեւոր է, որ առաջիններից մէկը կարողանանք ռիսկային խմբերին՝ տարեցներին եւ քրոնիկ հիւանդութիւններ ունեցողներին ապահովել համապատասխան քա-

նակի պատուաստանիւթերով:

Պատերազմի վերջերի սպիացումը, դրա հասցրած հարուածների հետեւանքների վերացումը մեր գերխնդիրն է: Այն պարտադրուած է 3000-ից աւելի սուրբ նահատակների թողած պատգամով՝ գրուած նրանց կեանքի գնով:

Մեր եւ գալիք սերունդների ուսերին պարտքի մեծ բեռ դրուեց այս տարի: Պարտաւոր ենք մեր գործողութիւններով եւ աշխատանքով արժեւորել մեր ընտրեալների յիշատակը՝ ընկալենք նրանց տուած դասերը եւ թողած պատգամի արժէքը: Այն մէկն է՝ աւելի հզօր պետութեան կառուցումը: Միայն այս դէպքում այս արհաւիրքների ականատես եղած մեր սերունդն արժանի կը լինի մեր նահատակների թափած արեանը:

Հայկական երկու պետութիւնների առաջ ծառայած մարտահրաւէրները չաղթահարելու համար անհրաժեշտ է ոչ միայն պետութեան նպատակային քաղաքականութեան ուժեղացումը, այլեւ համայն հայութեան ներուժի մէկտեղումը: Առաջնային խնդիր է պետութեան անվտանգութեան եւ պաշտպանութեան համակարգերի ամրացումը, որին պէտք է ուղղուեն բոլոր հնարաւոր ռեսուրսները: Այդ նպատակով նոր որակով եւ գաղափարախօսութեամբ պէտք է իրագործուի «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաքելութիւնը:

Զգալի ռեսուրսներ են անհրաժեշտ նաեւ պատերազմից յետոյ առկա հումանիտար հետեւանքները վերացնելու նպատակով: Միջոցներ են պէտք պատերազմում վիրաւորուած գինձառայողների բուժման խնդիրների, ինչպէս նաեւ գոհուածների եւ անհետ կորածների ընտանիքների աջակցութեան հարցերը լուծելու համար: Այդ նպատակով Աժ-ն արդէն քննարկում է «ՀՀ պաշտպանութեան ժամանակ գինձառայողների կեանքին կամ առողջութեանը պատճառուած վնասների հատուցման մասին» ՀՀ օրէնքում համապատասխան փոփոխութիւններ կատարելու հարցը, որով Զինծառայողների ապահովագրութեան հիմնադրամին նախկինում վճարուող 1000-աւան դրամներն աւելացնում են ըստ եկամուտների չափի: Նուազագոյն չափը սահմանուել է 1500 դրամ՝ մինչեւ 100 հազար դրամ աշխատավարձ ստացողների համար, եւ այն սանդղակներով հասնում է մինչը 15 հազար դրամի՝ ամսական 1 մլն դրամից աւելի եկամուտ ունեցողների համար: Սա միայն հիմնահարցերի լուծման գործիքներից մէկն է, եւ ակնկալուող արդիւնքների հասնելու համար համալիր լուծումներ են պէտք:

Այս հիմնահարցերի լուծումն առաջնային է հայկական երկու պետութիւնների սոցիալական լարուածութիւնը մեղմելու համար, քանի որ գոհերի ու անհետ կորածների թիւը մեծ է եւ սոցիալական մեծ շերտեր է ընդգրկում: Նման ծաւալի խնդիրների լուծումը 2021 թուականին նախանշում է ողջ Հայութեան ջանքերի մէկտեղմամբ ծանրաբեռնուած եւ գերլարուած աշխատանք: Կարեւոր է, որ գալիք տարին լինի մեր

**Խայտառակութիւն՝ Մոսկուայում.
Ինչ է Անուն Ռուսաստանի Հայերի
Միութիւնը**

ԱՐԱՍ ԱՍՏՆՈՒՆԻ

Մոսկուայում Հայաստանի դեսպանատան դիմաց բողոքի ակցիա է՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Մոսկուա ժամանման կապակցութեամբ: Ինչպէս յայտնի է, Փաշինեանի այցի առիթը հանդիպումն է Պուտինի եւ Պաքուի ղեկավար Ալիեւի հետ: Յայտնի են նաեւ օրակարգային հարցերը՝ կապուած Նոյեմբերի 9-ի համաձայնագրի հետ, ինչպէս նաեւ մտահոգութիւններ՝ կապուած այն բանի հետ, որ հանդիպմանը Հայաստանին կարող են պարտադրուել անցանկալի եւ ռիսկային համաձայնութիւններ: Այդ ամէնը հասկանալի է:

Անհասկանալի է այն, թէ ինչի՞ են ուղղում հասնել Մոսկուայում Հայաստանի դեսպանատան առաջ կազմակերպուած, թերեւս առանց չափազանցութեան՝ ամօթալի կամ խայտառակ, ակցիայի մասնակիցները կամ կազմակերպիչները: Այն, որ ինչպէս ցանկացած հայ, նոյն կերպ նաեւ նրանք ունեն մտահոգութիւններ, ունեն նաեւ ներկայիս իրավիճակի, Հայաստանի իշխանութեան, վարչապետի հասցէին իրենց գնահատականները՝ հասկանալի է: Այդ գնահատականները կարող են լինել ամէնատարբեր, իսկ մտահոգութիւնները՝ միանգամայն հիմնաւոր: Ամբողջ հարցն այն է, որ ակցիայի, այսպէս ասած, պատասխանների բովանդակութիւնը խօսում է ոչ թէ մտահոգութիւնների եւ դրանց կանխման ջանքի, այլ ընդամէնը Հայաստանի վարչապետի դէմ ընդգծուած կոշտ վերաբերմունքի մասին, որն այլ տպաւորութիւն, քան պարզապէս հայաստանեան ներքաղաքական պայքարի մոսկովեան «մասնաճիւղ» դրսեւորում, դժուար է գնահատել կամ բնութագրել:

Անգամ քաղաքական հարցերի գիտակ չլինելը բաւարար է՝ հասկանալու համար, որ Հայաստանի վարչապետի հասցէին վիրաւորական պատասխաններով բողոքի ակցիան ի զօրու է թուլացնել հենց Հայաստանին, տուեալ պահին Մոսկուայի հանդիպմանը Հայաստանի առաջին դէմքի կարգավիճակով ներկայացող Փաշինեանին, բայց բոլորովին ոչ այն քաղաքական ճնշումները կամ ռիսկերը, որոնք, ըստ ակցիայի կազմակերպիչների, կարող են լինել մոսկովեան հանդիպմանը: Իսկ ակցիայի կազմակերպիչը, ըստ Տէլեգրամ ալիքներով նախօրէին տարածուած տեղեկութեան, Ռուսաստանի Հայերի Միութիւնն է, որը, ինչպէս յայտնի է, գլխաւորում է հանրայայտ Արա Աբրահամեանը:

Յայտնի են նաեւ Արա Աբրահամեանի կապերը Հայաստանի նախկին իշխող համակարգի հետ: Այդ կապերը անշուշտ նրա իրաւունքն են, ինչպէս եւ նրա իրաւունքն է բողոքի որեւէ ակցիա: Ամբողջ հարցը ակցիայի բովանդակութիւնն ու տրամաբանութիւնն է, երբ թէկուզ մի փոքր

պետութիւնների մէջքերի ուղղման, բոլոր ոլորտներում յաղթանակների համար հաստատուն նախադրեալների ստեղծման ու էական ձեռքբերումների տարի:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»

խումբ ռուսաստանահայեր թշնամի պետութեան ղեկավարի հետ հանդիպումից առաջ զբաղուած են սեփական պետութեան կամ հայրենիքի ղեկավարի անձնական վարկաբեկումով: Ի դէպ, մի բան, որով հայաստանեան քաղաքական ուժերից մէկի արտերկրի կառուցները ինտենսիւ զբաղուած էին նաեւ 2009 թուականին, երբ հայ-թուրքական արձանագրութիւնների թեման Սփիւռքում քննարկելու համար մի քանի, այդ թուում՝ մոսկովեան համայնք էր այցելել Մերժ Սարգսեանը: Ընդ որում, նա չէր հանդիպում որեւէ ղեկավարի հետ, նա հանդիպում էր հենց հայկական համայնքների հետ, սակայն անգամ այդ պարագայում անձնական թիրախաւորումով բողոքի ակցիաները բացարձակապէս չէին կարող բխել Հայաստանի շահերից:

Նոյն կերպ՝ ներկայումս տեղի ունեցող ում շահերն է սպասարկում Ռուսաստանի Հայերի Միութիւնը: Միութեան կազմակերպած ակցիայի սակավամարդութիւնը վկայում է, որ Ռուսաստանի հայերը, մեղմ ասած, չեն ցանկացել մասնակցել այդպիսի խայտառակութեան: Եւ դա ոչ այն պատճառով, որ նրանք Նիկոլ Փաշինեանի քաղաքական հետեւորդներ են: Նրանք պարզապէս կարողացել են անհրաժեշտ պահին տարբերակել Նիկոլ Փաշինեանի հանդէպ վերաբերմունքն ու գնահատականը եւ Հայաստանի Հանրապետութեան խնդիրները:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Ըստ Նախագահի, Միակ Տրամաբանական Դեղատոմսը Խելամիտ Ժամկետներու Մէջ Արտահերթ Ընտրութիւններն են

«Ճիշդ կառուցուած քաղաքականութեան, դիւանագիտութեան եւ կառավարման դէպքում նոյնիսկ բնական պաշարներէն զուրկ ժողովուրդը ի վիճակի է հասնել շատ մեծ յաջողութիւնների, «Դէպի Չորրորդ Հանրապետութիւն» իր ծաւալուն յօդուածին մէջ գրած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը:



Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան

Խօսելով բովանդակային պետութեան կառուցման անխուսափելիութեան մասին նախագահը կը նշէ, որ առաջօր քաղաքացիներու պատճառները վերջին երեք տասնամեակներու ընթացքին կուտակուած եւ չլուծուած խոր արմատական խնդիրներու հետեւանքն են:

«Այո, մենք այսօր տանուլ ենք տուել ռազմի դաշտում եւ արտաքին ճակատում, որի համար ներկայ կառավարութիւնը պէտք է պատասխանատուութիւն կրի: Սակայն մեզ սպասում են այլ մարտահրաշխանքներ ինչպէս երկրի ներսում, այնպէս էլ միջազգային ասպարէզում: Որպէսզի պահպանենք մեր պետականութիւնը եւ այն դնենք սկզբունքորէն նոր մակարդակի վրայ, պէտք է մի կողմ դնենք զգացմունքները եւ սկսենք բարդ, տհաճ, սակայն անհրաժեշտ աշխատանքն առաջին հերթին ինքներս մեզ վրայ», - գրած է նախագահը:

Քաղաքացիները լիակատար բարոյական իրաւունք ունեն իրենց կողմից ընտրուած Ազգային ժողովի պատգամաւորներից, կառավարութիւնից եւ վարչապետից ժամանակային ու բովանդակութեան առումով կոնկրետ պատասխաններ պահանջել ճգնաժամից դուրս գալու:

լու ելքերի վերաբերեալ, գրել է Արմէն Սարգսեան, ընդգծելով, որ իր դերը եւ պատասխանատուութիւնը ունի նաեւ Հանրապետութեան նախագահը:

Նախագահի համաձայն, հասարակութեան պառակտումը կարող է հանգեցնել աղետալի հետեւանքների, ուստի երկրին եւ ժողովրդին անհրաժեշտ է բուժում, իսկ միակ տրամաբանական եւ քաղաքակիրթ դեղատոմսը խելամիտ ժամկետներու մէջ արտահերթ ընտրութիւններն են, Ընտրական Օրէնսգրքի եւ Մահամահադրութեան անհրաժեշտ փոփոխութիւններով, որոնք թոյլ կու տան պետական շինարարութեան իրական գործընթացն սկսել մաքուր էջից:

«Մինչ այդ, իշխանութեան օրինական, հաւասարակշռուած եւ անաչառ ճիւղերից մէկի՝ նախագահի ինստիտուտի օգնութեամբ պէտք է ձեւաւորուի Ազգային համաձայնութեան կառավարութիւնը:

Հայաստանի Մէջ «Սփուրնիք V»-ով Պատուաստուած Քաղաքացիներուն Սօս Որել Բարդութիւն Զէ Արձանագրուած

Ռուսաստանէն նուէր եկած «Սփուրնիք V»-ով պատուաստուած 15 քաղաքացիներուն մօտ պատուաստէն ետք որեւէ բարդութիւն չէ արձանագրուած, հաստատած է Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիւծման ազգային կեդրոնի փոխ տնօրէն, որ մէկն է պատուաստը ստացողներէն:



Գայանէ Սահակեանի խօսքով՝ Յունուարի վերջին, Փետրուարի սկիզբին, ներմուծուող պատուաստներու նոր խմբաքանակով կը պատուաստուին վտանգաւոր խումբերու մէջ գտնուող քաղաքացիները՝ տարեցները եւ քրոնիկ հիւանդութիւն ունեցողները: Պայմանագիրը միջազգային «Քովաքս ֆասիլիթի» նախաձեռնութեան հետ արդէն առկայ է:

«Բանակցութիւններ ենք տանում նաեւ ռուսական արտադրողի հետ, բանակցութիւններ են տարւում նաեւ այս պահին ամբողջ աշխարհում կիրառուող Pfizer-BioNTech պատուաստանիւթն ունենալու երկրում, «Մոտերնա»-ի շուրջ, որովհետեւ մեզ համար շատ կարեւոր է պատուաստանիւթի անվտանգութիւնը եւ արդիւնաւէտութիւնը: Բոլորդ էլ շատ լաւ գիտէք, որ այս պահին դեռեւս այս երեք պատուաստանիւթն է եւ գումարած դրան անգլիական AstraZeneca պատուաստանիւթի վերաբերեալ

Ըստ «Իմ Քայլը» Լքած Պատգամաւորին Իշխող Խումբէն Ներս Բնարկուած Է Վարչապետը Փոխարինելու Հարցը

Օրեր առաջ իշխող «Իմ քայլը» խմբակցութենէն դուրս ելած, բայց մանտաթը պահած պատգամաւոր Սոֆիա Յովսէփեան յայտարարած է, որ պատերազմէն յետոյ, խումբէն ներս քննարկուած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը Ազգային ժողովի քուէարկութեամբ այլ անձով փոխարինելու հարցը, սակայն համաձայնութեան չեն հասած:



«Իմ քայլ» խմբակցութենէն դուրս ելած պատգամաւոր Սոֆիա Յովսէփեան

Յովսէփեանի հարցումամբ՝ քննարկուած են տարբեր թեկնածուներու անուններ, անոնց կարգին՝ Աժ նախագահ Արարատ Միրզոյեանինը. - «Ես կարծում եմ, որ, այնուամենայնիւ, մինչեւ այսպէս ասած խորհրդարանական ընտրութիւններ գնալը պէտք է չէզոք կառավարում կազմակերպել: Բնականաբար, Ազգային ժողովը պէտք է ընտրի այդ անձին: Եւ կարծում եմ՝ երեք քաղաքական ուժերի եւ անկախ պատգամաւորների համատեղ որոշման արդիւնքում: Սկզբնական շրջանում անգամ առաջարկ արեցինք, որ «Իմ քայլի» ներսից լինի ընտրութիւնը»:

Ան ըսաւ, որ ինք անձամբ եւս թեկնածութիւն առաջարկած է, սակայն հրաժարեցաւ անուն ըսելէ՝ «զուտ չթիրախաւորելու համար»: Յովսէփեան հրաժարեցաւ պատասխանել նաեւ այն հարցին, թէ իմբակցութեան 88 պատգամաւորներէն քանի հոգին կողմ էին նոր վարչապետ ընտրուելուն:

«Իմ քայլ»-էն չեն մեկնաբանած, բայց եւ չեն հերքած՝ հեռացած պատգամաւորի այս յայտարարութիւնը, որ նման քննարկումներ եղած են: Այն, որ Յովսէփեան կուսակցական չէ եւ դուրս ելած է իշխող խմբակցութենէն, այդ դեռ չի նշանակեր, որ ան պիտի համագործակցի այլ քաղաքական ուժերու հետ: Պատգամաւորը կը բացառէ այն սենարը, ուր ինք Աժ-էն ներս կը քուէարկէ ընդդիմադիր 17 կուսակցութիւններու վարչապետի թեկնածու՝ Վազգէն Մանուկեանի օգտին. - «Որեւէ կերպ որեւէ մէկը, ես վստահ եմ, որ ո՛չ քայլ

կ'անի այդ առումով ինձ հետ քննարկելու եւ ո՛չ էլ քայլ կ'անի իմ որոշումից յետոյ քննարկելու, որովհետեւ բացառում եմ իրենց օրակարգը եւ իրենց վարչապետի թեկնածուին եւ ես յստակ այդ մասին երկար խօսել եմ»:

Այլ քաղաքական ուժերու հետ վարչապետի թեկնածուի հարցով համագործակցութեան մասին հարցին ան պատասխանեց. - «Այս պահին որեւէ քաղաքական ուժի հետ համագործակցութեան ո՛չ ցանկութիւն ունեմ, ո՛չ նպատակադրում»:

Ինչ կը վերաբերի Սոֆիա Յովսէփեանի դուրս ելլելէն յետոյ իմ քայլական գործընկերներու՝ իրեն ուղղուած յայտարարութիւններուն, Յովսէփեան զանոնք գնահատած է ոչ պարկեշտ: Յիշեցնենք, որ «Իմ քայլ»-էն Ռուբէն Ռուբինեան, գրած էր, թէ իմբակցութիւնը լքած պատգամաւորները պէտք է առնուազն բացատրեն, թէ որու եւ ինչ մասնաթիւղ կը շարունակեն մնալ պատգամաւոր՝ ոչ թէ փաստաթղթային, այլ քաղաքական համաթեքսթով:

Սոֆիա Յովսէփեան հակադարձած է, թէ ինք իր ընտրազանգուածը ունի եւ հաշուետու է անոնց առաջ:

Արցախի ԱԳ Նախարարի Պաշտօնին Նշանակուած Է Դաւիթ Բաբայեանը

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի հրամանագիրով Մասիս Մայիլեան ազատուած է Արցախի արտաքին գործոց նախարարի պաշտօնէն:



Արցախի ԱԳ Նախարարի Պաշտօնին Նշանակուած Է Դաւիթ Բաբայեան

Մայիլեան այս պաշտօնը գրաւած էր 2017 թուականի Սեպտեմբերէն:

Յարութիւնեանի մէկ այլ հրամանագիրով՝ Դաւիթ Բաբայեան, որ 2020 թուականի Մայիսէն Արցախի նախագահի արտաքին հարցերով խորհրդականն էր, նշանակուած է Արցախի արտաքին գործոց նախարար՝ ազատուելով խորհրդականի պաշտօնէ:

Ստորագրուած մէկ այլ հրամանագիրով՝ Վահրամ Բաղդասարեան ազատուած է Արցախի ֆինանսներու նախարարի պաշտօնէն՝ այլ աշխատանքի անցնելու կապակցութեամբ, իսկ Կրիկորի Մարտիրոսեանը նշանակուած է Արցա-

խի պետական նախարար, ֆինանսներու նախարար՝ ազատուելով պետական նախարարի պաշտօնէն:

ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի Փորձագետի Գնահատմամբ՝ Մոսկուայի Հանդիպումն Ետք Փաշինեանի Դիրքերը Քիչ Սը Ամրապնդուած Են

«Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի ղեկավարներ՝ Փուլիսի, Ալիեւի եւ Փաշինեանի միջեւ երկուշաբթի՝ Յունուար 11-ին ձեռք բերուած տարածաշրջանի նոր ենթակառուցուածքներու ծրագիրներու մասին պայմանաւորուածութիւնները հակասօրէն կը նուազեցնեն տարածաշրջանի իրավիճակի սրացման վտանգները», թԱՍՍ-ի հետ զրոյցի ընթացքին նման կարծիք յայտնած է «Միջազգային գործերով ռուսական խորհուրդի» գլխաւոր տնօրէն՝ Անտրէյ Քորթուսովը:

Անդրադառնալով Մոսկուայի հանդիպման թուրքիոյ բացակայութեան, ռուսաստանցի փորձագէտը ըսած է, թէ թուրքիան կարեւոր հարեւան է, հնարաւոր չէ զայն ամբողջովին բացառել այն ամէնէն, ինչ հիմա տեղի կ'ունենայ Հարաւային Կովկասի մէջ: Սակայն, փորձագէտի խօսքերով՝ Ռուսաստանի ղեկավարութիւնը անգամ մը եւս ցոյց տուաւ, որ այդ կարգաւորման

ու կարգաւորումէն յետոյ քայլերու հիմնական դերակատարը պիտի ըլլայ Մոսկուան:

Անտրէյ Քորթուսովի կարծիքով՝ Մոսկուայի հանդիպումէն յետոյ Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի դիրքերը քիչ մը ամրապնդուած են, բայց անոր քաղաքական ապագան «բաւականին մշուշոտ է»: Ըստ փորձագէտին՝ Փաշինեանի ապագան կախուած է, թէ ան որքանով ընդունակ է ընկերա-տնտեսական արդիւնքներ ցոյց տալու, Լեւոնային Ղարաբաղի տարածքէն ներս պահպանելու հակակայան ներկայութիւնը եւ Պաքուին հետ հասնելու կարգավիճակի քննարկման:

Յունուար 11-ին, Մոսկուայի մէջ տեղի ունեցած Փուլիս-Փաշինեան-Ալիեւ հանդիպման համատեղ յայտարարութիւնը ընդունուած է տարածաշրջանին մէջ ենթակառուցուած քայլին ու փոխադրային հաղորդակցութիւններու նոր ծրագիրներ կատարելու մասին:

Երեւան Սին եւ Հիմնագուրկ Կորակէ Պարուի Պնդումները

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը սին եւ հիմնագուրկ կ'որակէ Ատրպէյճանի պնդումները, թէ Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արա Ալվազեանի այցը Արցախ, Նոյեմբեր 9-ի յայտարարութեամբ ստանձնած պարտաւորութիւններու խախտում է:

«Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը որեւէ սահմանափակում չի մտցներ Հայաստանի եւ Արցախի միջեւ տարբեր մակարդակներու կապերու մասով», պատասխանելով «Ինթերֆաքս»-ի հարցերուն՝ յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտայեան:

«Ամբողջովին սին եւ հիմնագուրկ են: Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնը որեւէ սահմանափակում չի մտցնում Հայաստանի եւ Արցախի միջեւ տարբեր մակարդակներու կապերի մասով: Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնը, որն ուղղուած էր հրադադար հաստատելուն եւ Արցախ ռուս խաղաղապահներ տեղակայելուն, չի արձանագրում որեւէ համաձայնութիւն Արցախի կարգավիճակի մասով: Եւ այդ տեսակէտից այն բոլոր պնդումները, որ Արցախի կարգավիճակի մասով տեղի են ունեցել փոփոխութիւններ, իրականութեանը չեն համապատասխանում: Արցախի կարգավիճակը պէտք է որոշուի խաղաղ գործընթացի արդիւնքում՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահների կողմից առաջարկուած սկզբունքների, ժողովուրդներին ինքնորոշման իրաւունքի հիման վրայ», - ըսած է ԱԳՆ-ի խօսնակը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արա Ալվազեանի Յունուար 5-ին աշխատանքային այցով Արցախ եղած է: Ալվազեանի այցի կապակցութեամբ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը բողոք յայտնած է եւ զայն որակած է սադրանք ու լարուածութիւն հրահրելու փորձ: Ատրպէյճանի ԱԳՆ խօսնակ՝ Լէյլա Ապտուլաեւան այցը անօրինական որակած է եւ յայտարարած, որ այն կը



Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արա Ալվազեան

հակասէ Ատրպէյճանի, Հայաստանի եւ Ռուսաստանի ստորագրած գինադադարի համաձայնագրին:

Հարցին, թէ ինչպէ՞ս հակակայան կողմը կը գնահատէ Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան կատարման ընթացքը Ատրպէյճանի կողմէ, Նաղտայեան պատասխանած է. - «Նոյեմբերի 9-ի յայտարարութեան արդիւնքում դադարեցուցին լայնածաւալ ռազմական գործողութիւնները, եւ Արցախում տեղակայուեցին ռուս խաղաղապահներ»:

Հայաստանի արտաքին գերատեսչութեան մամուլի խօսնակի հաղորդմամբ, եռակողմ յայտարարութեան առաջին կէտի համաձայն կողմերը պէտք է կանգ առնեն Նոյեմբեր 10-ի դրութեամբ իրենց կողմէն գրաւած դիրքերուն վրայ եւ աւարտեն ռազմական գործողութիւնները: Մինչդեռ ատրպէյճանական կողմը, ըստ խօսնակին, հրադադարի հաստատումէն աւելի քան մէկ ամիս յետոյ ռազմական գործողութիւններ կատարած է Արցախի Հատրուսի շրջանի Հին թաղեր եւ Խծաբերդ բնակավայրերու ուղղութեամբ՝ պատճառելով մարդկային կորուստներ եւ գերեզմաններ գտնուող հայ գինածառայողները:

Մոսկուայի Մէջ Ընդունած Եռակողմ Յայտարարութիւնը

Հայաստանի վարչապետը, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Յունուար 11-ին Մոսկուայի մէջ կայացած հանդիպման ընդունած են համատեղ յայտարարութիւն:

Հայաստանի կառավարութիւնը հրապարակած է յայտարարութիւնը, ստորեւ կը ներկայացնենք զայն. -

«Ատրպէյճանի Հանրապետութեան նախագահ Ի.Ա.Ալիեւը, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Ն.Վ. Փաշինեանը եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վ.Վ.Փուլիսինը յայտարարում ենք հետեւեալի մասին.

1. 2020 թուականի Նոյեմբերի 9-ի յայտարարութեան՝ տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերն ապաշրջափակելու մասին 9-րդ կէտի իրականացման նպատակով աջակցում ենք Հայաստանի Հանրապետութեան, Ռուսաստանի Դաշնութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան փոխ վարչապետների համատեղ նախագահութեամբ եռակողմ աշխատանքային խումբ ստեղծելու մասին Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վ.Վ. Փուլիսիի առաջարկը:

2. Աշխատանքային խումբն առաջին հանդիպումը կ'անցկացնի մինչեւ 2021 թուականի Յունուարի 30-ը, որի արդիւնքների հիման վրայ կը կազմի Յայտարարութեան 9-րդ կէտի կիրառումից բխող աշխատանքների հիմնական ուղղութիւնների ցանկը՝ որպէս գերակայութիւններ ընդունելով երկաթուղային եւ ճանապարհային հաղորդակցութիւնները, ինչպէս նաեւ կը սահմանի Ատրպէյճանի Հանրապետութեան, Հայաստանի Հանրապետութեան ու Ռուսաստանի Դաշնութեան (այսուհետ՝ Կողմեր) միջեւ համաձայնեցուած այլ ուղղութիւններ:

3. Գործունէութեան հիմնա-

կան ուղղութիւններն իրականացնելու նպատակով Աշխատանքային խմբի համանախագահները կը հաստատեն այդ ոլորտներում փորձագիտական ենթախմբերի կազմը, որում կը ներառուեն կողմերի իրաւասու մարմինների ներկայացուցիչներ եւ կազմակերպութիւնների պաշտօնատար անձինք: Փորձագիտական ենթախմբերը, աշխատանքային խմբի նիստից յետոյ մէկամսեայ ժամկետում կը ներկայացնեն նախագծերի ցանկ, որում կը ներկայացնեն անհրաժեշտ միջոցներն ու միջոցառումները՝ դրանց իրականացման եւ կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատելու համար:

4. Աշխատանքային խումբը մինչեւ 2021 թուականի մարտի 1-ը կողմերի կողմից ամենաբարձր մակարդակով հաստատման կը ներկայացնի Ատրպէյճանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքով իրականացուող միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման եւ անվտանգութեան ապահովման համար անհրաժեշտ նոր փոխադրային ենթակառուցուածքների կառուցման միջոցառումների իրականացման ցանկ եւ ժամանակացուց, նոյն կերպ Ատրպէյճանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կողմից իրականացուող փոխադրումների համար, որոնք պահանջում են հատել Ատրպէյճանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքները»:

Քրեմլինի մէջ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու եռակողմ հանդիպումը տեւեց մօտ չորս ժամ: Պատերազմէն յետոյ անիկա Հայաստանի վարչապետի եւ Ատրպէյճանի նախագահի առաջին հանդիպումն էր:

Համաշխարհային Դրամատան Կանխատեսմամբ՝ 2021-ին Հայաստանի Մէջ Տնտեսական Աճը կը Գերազանցէ 3 Տոկոսը

«2020 թուականը Հայաստան կը փակէ 8 տոկոս տնտեսական անկմամբ», - կը պնդեն Համաշխարհային դրամատան (ՀԴ) փորձագէտները: Նախօրէին ֆինանսական աջակցի կառուցի հրապարակած «Համաշխարհային տնտեսութեան հեռանկարները» կոչուող ծաւալուն գեկոյցէն սակայն, պարզ կը դառնայ, որ 2021 թուականին հայաստանեան տնտեսութիւնը վերականգնման որոշակի առիթներ ունի: ՀԴ վերլուծաբաններու կանխատեսմամբ՝ նոր մեկնարկած տարուան մէջ Հայաստանի տնտեսութիւնը կարող է աճիլ շուրջ 3,1 տոկոսով:

Դրամատան մասնագէտներու գնահատմամբ՝ Հարաւային Կովկասի մէջ, նախորդ տարի արձանագրուած կտրուկ անկման զլխաւոր պատճառները երկու էին՝ «Քորոնա» ժահրի համաճարակն ու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ծագած պատերազմը: Ընդհանրապէս, ՀԴ մասնագէտներու համոզմամբ, քաղաքական անկայութիւնը դարձած է Արեւելեան եւրոպայի տնտեսական կեանքի բնականուր դարձած վտանգող զլխաւոր վտանգներէն մէկը:

«Համավարակի եւ հակամարտութեան յարուցած ցնցումներու թուլացման զուգահեռ, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան ոլորտի, գործարարներու եւ սպառողներու վստահութեան վերականգնման ֆոնին Հարաւային Կովկասի տնտեսական աճը 2021 թուականին կը կանխատեսուի 2,5 տոկոսի սահմաններու շուրջ», - կը պնդեն ՀԴ մասնագէտները:

Անոնց համոզմամբ՝ «կ'ակնկալուի, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան մասին յայտարարութիւնը կը նպաստէ տարածաշրջանին մէջ աշխարհաքաղաքական լարուածութեան նուազման»:

Զեկոյցի հեղինակները նաեւ միջնաժամկէտ կանխատեսումներով հանդէս եկած են նշելով, որ նախնական գնահատականներու համաձայն՝ 2022 թուականին տնտեսական աճի ծաւալները Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ կարող են հասնիլ 4, 5, իսկ Վրաստանի մէջ՝ 6 տոկոսի: Նոյն ժամանակահատուածին Ռուսաստանի մէջ տնտեսական աճի ցուցանիշը, ըստ ՀԴ-ին, չի գերազանցեր 3 տոկոսի ցուցանիշը:

Մոսկուայի Մեջ Փաշինեանի Դէմ Բողոքի Ցոյցը Անշուք Անցած է



Մոսկուայի մէջ փոքրաթիւ ցոյց Փաշինեանի դէմ

Հրապարակ թերթը գրած է թէ Նիկոլ Փաշինեանը Յունուար 11-ին Մոսկուայի մէջ այնտեղի հայերը դիմաւորեցին «Դաւաճան հողատու» եւ նմանատիպ այլ պաստառներով: Բայց հաւաքը, կարելի է ըսել, անշուք անցաւ. ինչպէս Երեւանի մէջ չկարողացան կանխել անոր թուիչքը դէպի Մոսկուա, այնպէս ալ Մոսկուայի մէջ չկարողացան զինք «պատշաճ դիմաւորել»: Ընդամէնը քանի մը տասնեակ հայեր Ռուսաստանի ՀՀ դեսպանատան դիմաց, ինչ որ պաստառներ փակցուցած էին դեսպանութեան ցանկապատին վրայ, Փաշինեանը մերժող գրութիւններով, ստորագրահաւաք կը կատարէին Փաշինեանի հրաժարականի պահանջով, եւ վերջ:

Բողոքի հաւաքը կազմակերպած էին Ռուսաստանի հայերու միութիւնը՝ Արա Աբրահամեանի գլխավորութեամբ, եւ այնտեղի դաշնակցականները: Վերջիններս մէկ ժամ անց հեռացուցին պաստառը, որմէ յետոյ աստիճանաբար նուազեցան մասնակիցները:

Միւս կողմէ ռուսահայերու այլ խումբ մը գորակցական նամակ յղած է Փաշինեանին, ուր ըստեղծ է.

«Յարգարժան պարոն վարչապետ, սիրելի քոյրեր եւ եղբայրներ համայն աշխարհի, մենք՝ Ռուսաստանի հայերս, ինչպէս բոլոր մեր հայրենակիցները ամբողջ աշ-

խարհի, սիրում ենք մեր հայրենիքը՝ Հայաստանը, կանգնած ենք հայ ժողովրդի կողքին: Մենք, Ռուսաստանի հայերս սատարում ենք հայ ժողովրդի ընտրած՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ իր կառավարութեանը: Այն, որ այսօր մի քանի թափփուկներ հայկական դեսպանատան մօտ խայտառակ «հաւաք» էին անում, դա կազմակերպուել եւ իրականացուել է թաւանջիներով (գողեր) վառ ներկայացուցիչ՝ Արա Աբրահամեանի կողմից: Այս ստոր արարածը իրեն ներկայացնում է որպէս հայ համայնքի դեկավար: Ուզում ենք տեղեկացնել ձեզ՝ Յարգարժան պարոն Փաշինեան, սիրելի հայ ժողովուրդ, որ Արա Աբրահամեանը չի ներկայացնում եւ չունի Ռուսաստանի հայերի նոյնիսկ մէկ տոկոսի վստահութիւնը: Խնդրեմ, մենք ապրում ենք զարգացած արդիւնաբերութիւններու տարաշրջանում, զանգահարէք եւ ճշմարտութիւնը կ'իմանաք Ռուսաստանում ապրող ձեր բարեկամներից եւ ընկերներից անձամբ: Այսօրուայ խայտառակութիւնը մենք չկարողացանք կանխել բոլորիդ յայտնի պատճառներով՝ Եկեղեցի, խռովութեան ոստիկաններ, որի համար նախ ինքներս ենք շատ նեղուած, եւ ներեղութիւն ենք խնդրում մեր քոյր եղբայրներից: Այնպէս, որ Ռուսաստանի հայութիւնը իր ժողովրդի եւ վարչապետ Փաշինեանի կողքին է»:

Պաքուն Հաստատած Է՝ Լիբանանահայ Մարալ Նաճարեան Ողջ Է Եւ Կը Գտնուի Ատրպէյճան

Լիբանանահայ Մարալ Նաճարեան ողջ է եւ կը գտնուի Ատրպէյճան, Մարալի քոյրը՝ Անի Նաճարեան տարեվերջին տեղեկացած է, որ Ատրպէյճանը վերջապէս պատասխանած է Մարալու իրաւունքներու եւրոպական դատարանի (ՄԻԵԴ) դիմումին:

«Ինքը Պաքուում է, ողջ է եւ իրեն սնունդ են տալիս», - ըսաւ Անի Նաճարեան:

«Ազատութիւնը» Դեկտեմբեր 1-ին անդրադարձած էր երկու լիբանանահայերու՝ Մարալ Նաճարեանի ու Վիգէն Էուլճեքեանի գերեզման հանգամանքներուն: Անոնք իրենց իրերը հաւաքելու համար Բերձոր մեկնած էին եռակողմ յայտարարութեան ստորագրման յաջորդ օրը՝ Նոյեմբեր 10-ին ու գերեզմարում: Օրեր անց Վիգէն Էուլճեքեանին, որ թաքսիի վարորդ էր ու Շուշի հաստատուած, Ատրպէյճանը ներկայացուց որպէս վարձկան ահաբեկիչ, իսկ Մարալ Նաճարեանի վերաբերեալ որեւէ տեղեկութիւն չկար: «Ազատութիւն»-ի ազդ տեսանիւթի նկարները օգտագործելով այժմ Ատրպէյճան Մարալին ալ կը ներկայացնէ, որպէս պատերազմի մասնակից:

«Պաքուի հեռուստատեսութիւնը ցոյց է տալիս, որ Վիգէնը եւ Մարալը իբր պատերազմի գնացած երկու անձ են՝ Լիբանանից եկած կուռելու, Արցախն ազատագրելու: Իրենք ասում են, որ մենք կարծում ենք, որ իրենք գերի են, բայց իրենք չեն ճշդում, որ իրենք գերի են», - նշեց Մարալի քոյրը:

Անին պատմած է, թէ քոյրը Պէյրութի պաթլոմէն յետոյ Հայաստան՝ խաղաղ կեանքի համար եկած էր եւ պատերազմէն օրեր



Ատրպէյճանի կողմէ պատանդ՝ Լիբանանահայ Մարալ Նաճարեան

առաջ երկուքով հաստատուած էին Բերձոր, Արցախի կառավարութիւնը անոնց համար տուն նախապատրաստած էր այդտեղ:

Այժմ՝ թէպէտ Պաքուն կը հաստատէ, որ Մարալ Նաճարեան իրենց մօտ է, սակայն բժշկական փաստաթղթեր դեռեւս չեն ներկայացուցած Սթրազպուրկի դատարանին, յայտնի չէ՝ թէ կիրն ինչ վիճակի մէջ է: Քոյրը ըսած է, որ երկու ամիս գերութեան մեջ գտնուող Մարալին հետ տեսակցելու կարծիք խաչն ալ հնարաւորութիւն չէ ստացած:

«Մինչեւ այսօր կարծիք խաչը չի կարողացել տեսնել Մարալին: Մենք այնտեղ դեռ երեք կին գերի ունենք, ինչո՞ւ են կանանց պահում այնտեղ, ո՞ւր է մեր կառավարութիւնը. վարչապետը լինի, ամբողջ անձնակազմը լինի, որ այս գործով զբաղուած են», - ըսաւ Անի Նաճարեան:

Չաւուշօղլու Խօսած Է Հայաստանի Հետ Կարգաւորման Մասին 3արարեցողութիւններու

Թրքական Hurriyet գրած է, որ Արտաքին Գործոց նախարար՝ Մեւլութ Չաւուշօղլու անդրադարձած է Ռուսաստանի միջնորդութեամբ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ստորագրուած պայմանաւորութեան, յոյս յայտնելով, որ Հայաստան չի խախտեր հրադադարը:

Չաւուշօղլուն նշած է, թէ այդ պայմանաւորութեան հետեւանքով վերջապէս Թուրքիան կարող է յարաբերութիւններ կարգաւորել Հայաստանի հետ: «Հայաստանը եւ Հայաստանի ժողովուրդը այդ կարգաւորութեան միայն կը շահին», ըսած է Չաւուշօղլուն:

Ե՞րբ Եւ Ի՞նչպէս Պէտք Է Կազմակերպուին Յաջորդ Ընտրութիւնները

Շարունակուած էջ 1-էն

մէկ տարի ետք կազմակերպել նոր ընտրութիւններ: Անցնող երկու ամիսներուն այս շարժումը ծախողեցաւ իշխանութենէն հեռացնել Փաշինեանին, գլխաւորաբար այն պատճառաւ, որ չկարողացաւ ապահովել հասարակութեան աջակցութիւնը ու անոր նկատմամբ չկայ վստահութիւն, որ պիտի կարողանայ յարգել իր խոստումը եւ կամ կազմակերպել ազատ եւ արդար ընտրութիւններ՝ նկատի ունենալով ոչ հեռու անցեալի փորձը:

Ընտրութիւնները կազմակերպելու համար նախագահ Սարգսեան կը խօսի «ազգային համաձայնութեան կառավարութեան» մասին, որ կազմուած պէտք է ըլլայ արհեստավարժներ եւ մասնագետներ: Այս առաջարկը տրա-

մաբանական պիտի նկատուի, եթէ Հայաստանը ունենար կայացած ժողովրդավարական կառոյցներ ու ակնդրութիւններ: Այսօրուայ պայմաններուն տակ, ընդդիմադրութիւնը տիրապետելով նիւթական եւ այլ հսկայ լծակներու շատ հեշտութեամբ կրնայ ոտնակոխ ընել արհեստավարժներու կառավարութիւնը ու գործադրութեան ղեկավար ընտրակեղծիքներու եւ ընտրակաշառքներու իր գինանոցը վերադառնալ իշխանութեան:

Այս պայմաններուն տակ, յաջորդ ընտրութիւնները պէտք է կայանան ըստ երկրի օրէնքներուն ու Սահմանադրութեան պահանջներուն՝ գործող կառավարութեան կողմէ, որ այսօրուայ դրութեամբ միակն է որ, կրնայ ապահովել Հայաստանի ժողովուրդի կամքի ազատարտայայտութիւնը: «ՄԱՍԻՍ»

Մոսկուայի Մէջ Կայացած

Շարունակուած էջ 1-էն

ներու մարմիններու փոխանակում: Հայկական կողմը այս բանակցութիւններու նախօրէին յայտարարած էր, թէ բանակցութիւններու հիմնական թեման գերիներու հարցն է: Ատրպէյճան գտնուող հայ գերիներու մասին յստակ տեղեկութիւն չկայ: Երկու օր առաջ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը մասնաւորապէս ըսած էր, թէ այնտեղ կը գտնուին 62 հայ գինուորականներ, որոնց Պաքուն ռազմագերի չի համարեր, այլ՝ «ահաբեկիչ», քանի որ անոնք գերեզմար-

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթերթին
Massis2@earthlink.net

Նոր Մտածելակերպ, Նոր Հայաստան Արժեքափ Բացայայտող Խօսքեր



ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Հայերս կը հպարտանանք, որ դարաւոր եւ հարուստ մշակոյթի տէր ազգ ենք: Բայց դժբախտաբար մենք ակնատես կ'ըլլանք շատ մը երեւոյթներու, որոնք մեզի կը յուշեն, որ այդ հպարտութեան զգացումը շատ մակերեսային է եւ մենք չենք ընկալած անոր արժէքը եւ զայն գործադրութեան չենք դրած մեր առօրեայ կեանքին մէջ: Մեր այս դիտարկման ճշմարտութեան անգամի մը համար եւս համոզուեցանք, տեսնելով եւ ականջալուր ըլլալով վերջին շաբաթներուն Հայաստանի հրապարակներէն հնչող խաչտարակ յայտարարութեանց: Մարթին Լուտէր Քինկ իրաւամբ ըսած է, որ «Մարդ անհատին բարձրագոյն չափանիշը կը կայանայ ոչ թէ հանգիստ եւ յարմար իրավիճակներու մէջ անոր որդեգրած դիրքորոշման վրայ, այլ՝ մարտահրաւէրներու եւ վիճարոյց դրութեանց մէջ»: Հրապարակի վրայի մեր «ղեկավարները», իրենց կատարած արտայայտութիւններով ցոյց տուին իրենց արժեքափ: Որ ո՛չ միայն օրինակելի չէ, այլեւ՝ պախարակելի: Տանք մի քանի նմոյշներ:

Միքայէլ Մինասեան
Մերժ Մարգեանի փեսան եւ վատիկանի մօտ մեր նախկին դեսպանը: «Խաչակիրները, յանուն եկեղեցուն պատժի շատ տեսակներ չունէին: Վերավորողի կ'ամ ականջներն էին կտրում, կ'ամ ոտքերը ջարդում»: «Նիկոլ Փաշինեանին ու կիսամարդկանց պատերի տակ սատկացնելու» են: «Ես խստօրէն պատժելու եմ ձեզ ու միայն դրանից յետոյ կը թողնեմ ձեզ դատեն օրէնքի ամբողջ խտութեամբ»: Հոս արդէն Մինասեան անգիտակցաբար կը բացայայտէ իր միտումները: Ըստ երեւոյթին, ան կ'ակնկալէր իշխանութիւնը ժառանգել իր աներհօրմէն, անոր նման դառնալ մենատէր, «խստօրէն պատժել» իր հակառակորդները եւ «միայն դրանից յետոյ կը թողնէ», որ իրեն խամաճիկ դատարանները դատեն ըստ իր հրահանգներուն: Տանք իրմէ մի քանի նմոյշ եւս: «Պէտք է լինի շուտափոյթ համահայկական դատարան, որ մարդիկ ձեզ կտոր-կտոր չանեն»: «Ֆիզիքական հաշուեյարդար կը լինի ցանկացածի հետ»: «Նիկոլը, Աննան եւ կիսամարդիկ վառուելու են դժոխքում. ձեզ իսկական տէնօր է սպառում»: Իր բառամթերքէն անպակաս են «վիժուացքներ», «ստրկամիտ անասուն», «սրբապիղծներ», եւ նմանատիպ այլ ար-

տայայտութիւններ:

Վազգէն Մանուկեան
16-17-ի վարչապետի թեկնածուն: «Նիկոլ Փաշինեանը մի բան էլ պէտք է հասկանայ, որ ինքը ինչքան շուտ կամաւոր հրաժարական տայ, այնքան իրեն լաւ: Շարժումը չյաղթեց՝ դազազած ժողովուրդը իրեն կը յոշօտի»: «Պահպայ, որ էլ չենք նայի՝ ինչն է ճիշտ, ինչը սխալ. կարեւորը՝ ինքը գնա»: Զգտելով նսեմացնել Փաշինեանը, Մանուկեան տարօրինակ յայտարարութեամբ մը հանդէս կու գար, որ հակառակ արդիւնքը կու տար, բացայայտելով իրենց խումբի տկարութիւնը՝ «Մի հատ խղճուկ, փոքր մարդ, խաբելով ամբողջ ժողովուրդին, եկաւ իշխանութեան, կործանեց ամբողջ երկիրը եւ մենք այսքան հօգր, խելօք, անձնագորհ, ազնիւ մարդկանցով, այդ փոքր մարդուն դէմ ենք պայքարում»: Մանուկեան հա՛նդրադառնար, որ այս խօսքերով խոստովանած կ'ըլլայ իրենց «հօգր, խելօք» խումբի տկարութիւնը հանդէպ «խղճուկ, փոքր մարդուն»:

Նաիրա Ձոհրաբեան
«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ եւ Ազգային ժողովի Մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ հանրային հարցերու մշտական յանձնաժողովի նախագահի հանգամանքին բոլորովին անյարիր յայտարարութիւնը, ուղղուած ժողովուրդին. «Ես ատում եմ քեզ, ժեխ, որ իշխանութեան բերեցիր քո նմանին, ով դանդաղ փակում է մեր պետականութեան էջը»: Առ ի բացատրութիւն, նշենք, որ «ժեխ» կը նշանակէ գարշելի՝ զազիր բան, մարդու աղբ, կեղտ, կղկղանք: Եւ այս բառերը արտասանողը ի պաշտօնէ պատասխանատու է մարդու իրաւունքներու պաշտպանութեան: Մէկ այլ նմուշ իր յայտարարութիւններէն՝ «Զեմ բացառում, որ Ազգայնականի խորհրդարանում սկսուի գործընթաց, Նիկոլ Փաշինեանին Ազգայնականի հերոսի կոչում տալու համար»:

Գառնիկ Իսաղուլեան
1993-ին ՀՅԴ-ի պատգամաւորական խմբակի նախագահի հանգամանքով կը յայտարարէր «շատ շուտով իշխանութեան փոփոխութիւն տեղի կ'ունենայ, որուն 90% իր ուսերուն վրայ պէտք է վերցնէ ՀՅԴ-ն»: Երբ իշխանափոխութիւնը ուշացաւ, 1995-ին ան կոչ կ'ուղղէր ժողովուրդին, իրենց տալու «մանտաթ՝ կախելու, ջարդելու...»: ՀՅԴ-էն արտաքսուել է

քանի մը այլ տէրերու ծառայելէ ետք, հիմնած է իր անձնական կուսակցութիւնը եւ տարօրինակօրէն զայն անուանած «Ազգային Անվտանգութիւն»: Այդ հանգամանքով ալ Youtube-ի կայքէջով տեսանիւթ մը կը տեղադրէր հետեւեալ վերնագրով՝ «Նիկոլին գնդակահարողին պէտք է տալ Ազգային հերոսի կոչում կամ մէկ միլիոն տոլար պարգեւավճար»: Ճիշտ նոյն մտածելակերպով, ինչպէս Նայիրի Յունանեանին խոստումներ շուսլեցին, իրագործելու Հոկտեմբեր 27:

Սուրիկ Խաչատրեան
Միւնիքի նախկին մարզպետ, ժողովուրդը հարստահարող օլիգարխ, իրեն հակառակորդներուն սպաննութեամբ մեղադրուող: «Երկրի ապիկար եւ սրբապիղծ փաստացի ղեկավարութիւնը, յատկապէս Նիկոլ Փաշինեանը իրաւունք չունեն ոտք դնել Միւնեաց անարատ հողի վրայ»: Կը նշմարէ՞ք, որ հայրենիքը կողոպտող նախկինները յանկարծ սրբութիւններու պաշտպան դարձած են:

Արծուիկ Սինասեան
Հայաստանի ՀՅԴ Գերագոյն Մարմնի անդամ: Զբաւականանալով Նիկոլ Փաշինեանին ուղղուած շատ մը մեղադրանքներով, անոնց վրայ կ'աւելցնէ պաակաձեւ ժահրն ալ: «Ութ ամսուայ մէջ Նիկոլ Փաշինեանը ապահովեց 8000 զոհ, 8000 հայ զոհուեցին ռազմաճակատում եւ կործանվիրուսի հետեւանքով եւ սրա թիւ մէկ պատասխանատուն Նիկոլ Փաշինեանն ու իր կառավարութիւնն է»:

Գեղամ Մանուկեան
Հայաստանի ՀՅԴ Գերագոյն Մարմնի անդամ: Կ'ամբաստանէ ժողովուրդը, որ «ստրուկ էք դարձել. ձեր լուութեան պատճառաւ հայութիւնը պարտուել է»: Ճիշտ այն նոյն տրամաբանութեամբ, որով էդիկ Յովհաննիսեանը 1991-ին «քաղաքացիական գիտակցութեան պակաս»ով կ'ամբաստանէր Լեւոն Տէր Պետրոսեանին նախագահ ընտրած հայրենի ժողովուրդը:

Հայկ Մարտիրոսեան
Քաղաքագէտի հանգամանքի իր բառամթերքէն կու տանք քանի մը նմոյշներ՝ «անուղեղների ոհմակ», «նախիր», «սատանայի եւ թշնամու գործակալ», «ազգապիղծ տականք», եւ այլն:
Բաւականանանք այս օրինակներով, ուր կը տեսնենք թէ այս անձինք, ինչպէս «վերեն կը նային» ժողովուրդին, զայն կեղտ կ'անուանեն, կ'արհամարհեն, կը սպառնան, եւ այլն, ու ապա իրենք զիրենք կը ներկայացնեն որպէս արդար դատաւորներ, որոնք պիտի փրկեն ժողովուրդի վիրաւորուած արժանապատուութիւնը եւ փրկեն հայրենիքը: Այս մարդիկ չեն անդրադառնար, որ իրենց խօսքերուն ընդմէջէն կը բացայայտեն իրենց մտածելակերպը, իրենց ներաշխար-

Այս բոլոր կէտերն ունէին սկզբունքային նշանակութիւն: Արցախի դուրսմղումը բանակցային գործընթացից եւ բանակցութիւնները Հայաստան-ադրբեջան հարթութիւն տեղափոխելը սպառնալիք էր ստեղծում առաջին հերթին Հայաստանի համար, որովհետեւ հենց այս հանգամանքն օգտագործելով էր Ատրպէյճանը Հայաստանին օկուպանտի պիտակ կապնում: Եւ յետոյ՝ նման ֆորմատը ինքնին նենգափոխում էր Ղարաբաղի հարցի էութիւնը, այն տեղադրելով Հայաստան-ադրբեջան տարածքային վէճի տրամաբանութեան մէջ:

90-ականների երկրորդ կեսին սա Հայաստանի ամենամեծ եւ աղէտալի դիւանագիտական վրիպումն էր, որն ի դէպ, կարելի էր եւ թոյլ չտալ: Այն ժամանակ, այդ, Հայաստանը կարող էր հրաժարուել առանց Ղարաբաղի բանակցելուց, որովհետեւ Ատրպէյճանը պատրաստ չէր պատերազմի, դուրս չէր եկել պարտութեան շուկից եւ նոյնիսկ բանակցային գործընթացի կասեցումը չէր կարող հակառակ սպառնալիքներ ստեղծել Հայաստանի եւ Արցախի համար: Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին բանակցութիւններից դուրս թողնելով մենք չէինք էլ գիտակցում, որ փոքրացնում ենք Արցախի ինքնորոշման հնարաւորութիւնները, որովհետեւ «օկուպացված տարածքի» ինքնորոշումը որ՞ն է, նման բան ի բնէ լինել չի կարող:

Նաեւ այս էր պատճառը, որ 2000-ականների առաջին կեսի բանակցային կուլմիւնացիան դարձավ

44-Օրեայ Պատերազմի Ծագումը

Շարունակում էք 11-էն

«տարածքների փոխանակման» կոնցեպտը, ասենք՝ Մեդրին Ղարաբաղի դիմաց...

Պակաս կարեւոր էր նաեւ Մատրիտեան սկզբունքների պարզաբանման հարցը: Ժիշտ է, կազանյան մերժումով, Ատրպէյճանը վիժեցրել էր Մադրիդյեան սկզբունքները, բայց ֆորմալ առումով դրանք դեռեւս գոյութիւն ունէին, եւ Ատրպէյճանը մեկնաբանում էր, թէ Մադրիդյեան սկզբունքները նշանակում են, թէ Արցախի հայութիւնը կարող է ինքնորոշուել միայն Ատրպէյճանի կազմում: Հայաստանը հակառակն էր պնդում, ինչը նշանակում էր, որ Մատրիտեան սկզբունքները ոչ թէ հարցի կարգաւորման բանաձեւ են, այլ անհասկանալի ինչ-որ բան:

Յաջորդը՝ հանրային դիսկուրսի առումով հանդէս եկալ բաւականին կառուցողական բանաձեւով, հրապարակային պնդելով, որ ԼՂ հարցի որեւէ լուծում պէտք է ընդունելի լինի նաեւ Ատրպէյճանի ժողովրդի համար: Այս ամէնի նպատակը ԼՂ հարցի բանակցային գործընթացը դուրս բերելն էր տարածքներ յանձնելու պրիմիտիւ տրամաբանութիւնից: Եւ հէնց այստեղ էր ձախողումը, որովհետեւ պարզուեց՝ 2016-ին շարժված գնացքը կանգնեցնել հնարաւոր է: Հիմա շատերն են ասում, թէ այդ գնացքը հնարաւոր էր կանգնեցնել ուսումնասիրելով եւ ուսումնասիրելով քաղաքականութեամբ, իբր մեր կառավարութիւնը ուղիղ հակառակն է արել: Իրականութիւնը, սակայն, բոլորովին այլ է, եւ այսպէս խօսողները չեն նկատում այնպիսի շրջադարձային քայլեր, ինչպիսին Միլիտարականագործողներ եւ բժիշկներ գործուղելու ՀՀ կառավարութեան՝ 2019 թուականին կայացրած որոշումը:

Խելամտութեան կանխաւարկած

Սկզբունքային հարց է, ի հարկէ, թէ ինչքանով է խելամիտ փորձել դիմադրել «չարժուած» եւ արագութիւն հաւաքած «գնացքին»: Իսկ որն է հակառակը: Հակառակը տարածքների յանձնումն է՝ ըստ հուլիսեան ոչնչի դիմաց: Հիմա, ի հարկէ, յետահայեաց կարելի է ասել՝ դա ավելի լաւ է, քան այն ինչ ունենք, առնուազն մարդկային հազարաւոր կեանքեր փրկած կը լինէինք: Բայց՝ յետահայեաց: Յետահայեաց՝ այդ նոյնը կարելի էր անել 1997-ին, 2004-ին, 2011-ին, 2016-ին ի վերջոյ: Այո, կարելի էր անել նաեւ 2020-ին: Բայց ինքներս մեզ ինչ փաստարկով էինք համոզելու: Որ կպարտվենք պատերազմում: Այս փաստարկը, ի հարկէ, կար:

Բայց 2020թ. յուլիսեան մարտերը հակառակ գործընթացի ունեցան իրադրութեան գնահատականի վրայ: Ժիշտ է՝ մարտական գործողութիւնների մասշտաբը յետագայ պատերազմի համեմատ չափազանց փոքր էր, բայց յուլիսեան մարտերում ներգրաւուած էին ազրբեջանական էլիտար ստորաբաժանումները, իսրայէլական անօդաչու թռչող սարքեր, եւ մեր բանակը ոչ միայն դիմակայեց, այլեւ մարտական դիրքում եւ մարտերի ընթացքում մենք ոչ մի գոհ չունեցանք, ոչ մի գոհ: Մեր գոհները թիկունքում էին նահատակուել:

Յուլիսեան մարտերը, ի հարկէ, բացասական դեր նոյնպէս խաղացան այն իմաստով, որ Ատրպէյճանը հասկանալով, որ միայնակ չի կարողանալու ռազմական յաջողութիւն ունենալ՝ Թուրքիային եւ սիրիացի վարձկաններին ներգրաւելու որոշում կայացրեց: Հէնց այստեղ էր վճռական պահը, որտեղ մենք պէտք է միակողմանի գիշումների գնալու որոշում կայացնէինք: Դեռ մինչեւ յուլիսեան դէպքերը անընդհատ կարծրացող ազրբեջանական ռիտորիկան այլ տարբերակ էր թողնում:

Ի դէպ, Ատրպէյճանի հակահայկական քարոզչութիւնը այն միակ անփոփոխ գործօնն էր, որ գոյութիւն ունէր վերջին 15 տարվայ ընթացքում: Հայաստեացութիւնը, Ղարաբաղն աներկբայ ազրբեջանական համարելը, գէնքի ուժով հարցը լուծելու շարունակական քարոզչութիւնը հասել էին գագաթնակէտին:

Նոյնիսկ այս պայմաններում բանակցային գործընթացը շարունակում էր, այնքանով որքանով թոյլ էր տալիս կորոնավիրուսի համավարակը: ԱԳ նախարարը անընդհատ քննարկումների մէջ էր համանախագահողների հետ: Բայց ըստ հուլիսեան Ատրպէյճանը չէր մտնում բանակցութիւնների մէջ, յստակ ցոյց տալով, որ իր համար բանակցային նպատակը առաջուայ նման շարունակում է մնալ առանց նախապայմանների տարածքների յանձնումը:

Եթէ մենք ասէինք համաձայն ենք, պատերազմը ի հարկէ կը կանխուէր: Պատերազմը նման պայմաններում կարող էինք նաեւ կանգնեցնել, ինչի մասին յայտարարեցի պատերազմի մեկնարկի առաջին օրը՝ Ռազմական դրութեան կապակցութեամբ Աժ-ում հրաւիրուած յատուկ նիստում: Նման տարբերակը, սակայն, ոչ միայն ինձ համար ընդունելի չէր, այլեւ այդ օրերին չլսեցի որեւէ ձայն, որ հէնց այդպէս էլ պէտք է վարուել:

Սրան, ի հարկէ, հանրայայտ հակափաստարկ կալ. միւսները, հանրութիւնը չէին տիրապետում կամ չէին կարող տիրապետել այն տեղեկատվութեանը, որ վարչապետն էր տիրապետում եւ ուրեմն՝ վարչապետը իր իմացած տեղեկատուութեան հիման վրայ պէտք է որոշում կայացնէր:

Ժիշտ փաստարկ է, եւ իմ տիրապետած տեղեկատուութիւնը այն մասին էր, որ իրադրութեան լիցքաթափումը կամ պատերազմը կանգնեցնելը հնարաւոր չէ առանց Արցախի ու Հայաստանի համար աղէտալի հետեւանքների: Եւ ուրեմն, որոշումն էր՝ պայքարել այդ աղէտալի հետեւանքների դէմ: Արդիւնքում ավելի աղէտալի հետեւանքներ ունեցանք: Գուցէ:

Բայց այն միւս աղէտի հնարաւոր մասշտաբները գիտենք տեսականօրէն: Հիմա չգիտենք, թէ այն միւս աղէտը գործնականում ինչպիսին էր լինելու, ինչպէս այն ժամանակ չգիտէինք այս մի աղէտի գործնական պարամետրերը:

Միայն գիտենք, որ Շուռնուխի գիւղապետի «լայվերը» հաստատապէս ներկայ էին լինելու բոլոր սցենարներում, որովհետեւ Ղուբաթլուի շրջանը Ատրպէյճանին էր յանձնուելու վերը նկարագրուած բոլոր սցենարներում, Շուռնուխի ու Որոտանի 20 տների շուրջ սահմանային վէճը նոյն կերպ

ծաւալուելու էր: Բայց հիմա մենք գիտենք, որ մինչեւ Շուռնուխի սահմանագծին հասնելը պայքարել ենք ամէն թիզ հողի համար:

Խաղաղ յանձնման սցենարի ժամանակ էլ էինք պայքարելու: Ուրեմն՝ պատերազմը սկսուելու էր ոչ թէ Հորադիզի, այլ Շուռնուխի մատուցներում: Այս սցենարով պատերազմը Շուռնուխի մատուցներում գոնէ աւարտուել է, չնայած՝ հիմա ոմանք ջանք չեն խնայում, հնարաւոր եւ անհնար ամէն ինչ անում են, որ Շուռնուխի մատուցներում պատերազմը նորից սկսուի:

Գիտեմ, որ յօդուածի այս հատուածին բաւական ճշմարտանման փաստարկ են բերելու, թէ հողերի խաղաղ, բանակցային յանձնման պարագայում մեր բանակցային դիրքերը շատ ավելի ամուր էին լինելու, որովհետեւ մենք հանդէս էինք գալու յաղթողի դիրքերից եւ կարող էինք ստանալ աւելին: Շատ լաւ, կարող էինք՝ ստանայինք նախկինում, երբ Ատրպէյճանը ռազմական առումով շատ ավելի թոյլ էր: Յաղթողի դիրք ունէինք, բանակցային գործընթացի ողջ պատմութեան ընթացքում որեւէ անգամ օգտագործէինք յաղթողի այդ դիրքը որեւէ կոնկրետ արդիւնք ապահովելու համար:

Յօդուածի մինչ այս շարադրուած տրամաբանութեանը յայտնի այլ «հակափաստարկներ» էլ կան: Ոմանք պնդում են, թէ իրենք գիտէին բանակցութիւնների յաղթական շարունակման սցենար եւ պատրաստուած էին այդ սցենարը կեանքի կոչել 2018 թուականին եւ դրանից յետոյ: Սա ընդհանրապէս ցրինդմի գագաթնակէտն է:

Այսինքն՝ Ռուսաստանը եւ միւս համանախագահները իրենց առաջարկած պլանից հրաժարուելու էին, համանախագահներն էլ համաձայնուելու էին ի հեճուկս Ատրպէյճանի Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու: Եւ կրկին՝ այդպիսի յաղթական պլան իրագործող էիք, կազանում իրագործէիք, եթէ այդքան յաղթական պլան իրագործող էիք, այնպէս անէիք, որ ուսական պլան չստեղծուէր եւ սեղանին չդրուէր, եթէ այդքան պատերազմ կանխող էիք, 2016 թուականին ապրիլեան պատերազմը կանխէիք, կամ մինչեւ 2018 թուականի յեղափոխութիւնը ձեր յաղթական բանակցութիւնների պլանն իրագործէիք: Թէ պիտի փաստարկէք, որ 5 շրջանները յանձնելու էինք, երկուսը պահելու՝ ԼՂ կարգավիճակի հետ փոխկապակցելու համար: Տրամաբանական փաստարկ է: Բայց ինչո՞ւ պիտի Ատրպէյճանը 2018 կամ 20 թուականին համաձայններ նրան, ինչի հետ կտրականապէս համաձայն չէր 2011-ին երբ կազանում հրաժարուեց ստորագրել ԱԳ

նախարարների մակարդակով համաձայնեցուած փաստաթուղթը: Այն ժամանակ, յիշեցնեմ, Ատրպէյճանը շատ ավելի քիչ էր պատրաստ պատերազմին:

Մէկ ուրիշ ցնցող մեղադրանք էլ ի յայտ եկաւ վերջին շրջանում, թէ ես իմ յայտարարութիւններով Ատրպէյճանին զրկել եմ բանակցութիւններով արդիւնքի հասնելու որեւէ յոյսից, ինչով պատերազմը դարձրել եմ անխուսափելի: Խնդրում եմ ուշադիր կարդացէք այս միտքը: Ուրեմն՝ ստացուած է, որ բանակցային գործընթացի ողջ իմաստն ու նպատակը, որ մարդիկ 20 տարի վարել են, եղել է Ատրպէյճանին յոյս տալը, որ ինքը բանակցութիւններով կարող է հասնել նրան, ինչին ուզում է հասնել պատերազմի միջոցով:

Հէնց ս'ա եմ ասում: Ասում եմ, որ 20 տարի վարած բանակցութիւնների նպատակը Ատրպէյճանին յոյս տալն է եղել, ես էլ փաստօրէն Ատրպէյճանին յուսահար անողը դարձայ՝ մինչ այդ նրան տուած յոյսերի ֆօնին: Ատրպէյճանին յոյս տալու ռազմավարութիւնը վերջը ինչո՞վ էր աւարտուելու ու եր՞բ: Մենք յոյս էինք տալիս Ատրպէյճանին, իսկ նա գէնք էր գնում՝ զուգահեռաբար միջազգային տարատեսակ ատեաններում արձանագրելով ԼՂ հարցը իր տարածքային ամբողջականութեան շրջանակներում լուծելու «միջազգային խօսույթը»:

Վերջաբան

Ըստ հուլիսեան սա պատմութեան այն հատուածն էր, թէ ինչու սկսուեց 44-օրեայ պատերազմը, ինչ հանգամանքների բերումով: Բայց ի հարկէ, կարեւոր է խօսակցութիւնը պատերազմի ընթացքի, յաղթանակի հնարաւորութիւնների ու պարտութեան պատճառների, նոյնիմանի 9-ի յայտարարութեան ստորագրման, ետպատերազմական իրադարձութիւնների եւ ամենակարեւորը՝ Հայաստանի եւ Արցախի ապագայի մասին: Ըստ անհրաժեշտութեան՝ այդ թեմաներին անդրադարձ կրկին կ'ունենամ: Եթէ պարզուի, որ յօդուածը դեռ ընդունելի ժանր է մեր հանրութեան համար, հնարաւոր է նաեւ հէնց յօդուածների տեսքով: Ժամանակը ցոյց կտայ: Հասկանում եմ նաեւ, որ այս յօդուածը հիասթափեցնող է բոլոր նրանց համար, ովքեր յոգնել են անցեալի շուրջ քննարկումներից եւ ուզում են տեսնել ապագան: Բայց մօտիկ ու ոչ այնքան մօտիկ անցեալի մասին այսպիսի խօսակցութիւնը կարեւոր է ապագայի շուրջ լիաթոք խօսակցութիւն սկսելու համար:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ
ՀՀ վարչապետ

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Նետուիմք Վերականգնումի Բարձունքներն Ի Վեր

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Համաշխարհային Ա. պատերազմի աւարտին, երբ ցեղասպանները թուրք Ձինուտրական ատեանին կողմէ որպէս ոճրագործ կը դատուէին, Քեմալ Աթաթուրքի արշաւը՝ վերականգնելու թուրքիան, երկու ճակատի վրայ կը տարուէր: Մէկ կողմէ նորածին համայնավար Ռուսիոյ հիմերը ամրապնդելու ջանքերուն գործընկեր ձեւանալով եւ թրքանպաստ շարք մը համաձայնութիւններ կնքելով, միւս կողմէ ալ Եւրոպայի գերհզօր երկու հակներուն՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի, դէպի Եւրոպա համայնավար հոսանքը կանխելու երաշխիքներ տալով: Արդիւնքը յաջող եղաւ թուրքիոյ՝ Լօզանի դաշնագրի (24 Յուլիս 1923) կնքումով, եւ Արցախն ու Նախիջեւանը ի նպաստ Ատրպէյճանի՝ Հայաստանէն կորզելով:

Էրտողան նոյն խաղը կը խաղայ այսօր Արեւմուտքի եւ Արեւելքի երկու հակներուն միջեւ: Սուրիոյ պատերազմին սկիզբէն ի վեր (2011) միջամուխ եղաւ այդ պատերազմին եւ «ուխտեց Դամասկոսի մէջ աղօթել», ըստ Լոնտոնի մէջ հրատարակուող «Middle East Monitor»-ի 30 Յունուար 2014 թիւին: Յետոյ յանդգնեցաւ 2016 թուականի վերջին կէսերուն, Ամերիկայի խելագար նախագահ Թրամփի թիւկունքը վայելելով, իր գործերով ներթափանցել Սուրիոյ սահմաններէն ներս ու հոն գրաւեց որոշ տարածքներ:

Յետոյ յանդգնեցաւ երթալ աւելի հեռու՝ դէպի Իրաք ու Լիպիա, եւ ասպարէզ կարողալ Յունաստանի ու Ֆրանսայի՝ Միջերկրականի արեւելեան փոխ ջուրերուն մէջ: Այդ ըրաւ Թրամփի եւ Փութինի ամուլութիւնը կամ թուրքիւնը օգտագործելով եւ երկուքին միջեւ դաշնակիցի քաղաքականութիւն վարելու պատրաստակամութեան խաբկանք ցուցաբերելով: Մինչ այդ, Ալիւլի հետ «մեծ եղբայր» եւ «մէկ ազգ՝ երկու երկրի մէջ» ըլլալու քարոզչութիւն տանելով, Փութինի հետ իր ունեցած խօսակցութիւններուն ընթացքին գետին պատրաստեց Արցախի կարգավիճակը փոխելու: Եւ պատահեցաւ դժբախտութիւնը մեր պարտութեան Արցախի ճակատին վրայ՝ թուրքիոյ «Պայրաքտար»-ներով եւ Ռուսիոյ դաւադրութիւններով:

Հիմա պարտութիւն եւ արժանապատուութեան ոտնակոխում ճաշակածի մեր ներկան ինչպէ՞ս կրնանք յաղթահարել: Պարտուեցանք, սակայն պէտք է գիտնանք, թէ ունինք քաղաքակիրթ աշխարհի սէրը, յարգանքն ու մեր դժբախտութեան ի տես օգնութեան ձեռք երկարելու մարդասիրական պատրաստակամութիւնը: Եթէ Իսրայէլ, յետ Հոլոքոսթին, շահագործեց քաղաքակիրթ մարդկութեան կարեկցութիւնը միլիառաւոր գումարներու օգնութիւն ստանալով աշխարհէն, մենք ալ պէտք է առիթը օգտագործենք ստանալու միլիառաւոր գումարներ՝ վերականգնելու մեր ժողովուրդին նոր ապագան, հարուստ՝ գիտութեամբ եւ տնտեսութեամբ, ինչպէ՞ս՝ Իսրայէլ:

Մենք գիտցած ենք ամէն աղէտէ ետք ոտքի կանգնիլ եւ այս անգամ ալ վստահաբար աւելի վեր եւ աւելի ամուր պիտի կանգնինք աշխարհի առաջ՝ մեր հերոսութիւններով հպարտացած եւ մեր մտքի ուժով լուսաւորուած:

Ամերիկայի քաղաքացիական իրաւունքներու ջատագով եւ նահատակ սեւամորթ առաջնորդ Մարթին Լութըր Քինկի խօսքը՝ թէ «անարդարութիւն որեւէ տեղ, վտանգ է արդարութեան ամէն տեղ», վստահաբար արձագանգ կը գտնէ քաղաքակիրթ աշխարհի առաջնորդներու ապագայ ծրագրերուն եւ որոշումներուն մէջ՝ հայութեան տալու իր յափշտակուած իրաւունքները: Ռուսիոյ նախագահ Փութինի կատարած յայտարարութիւնը, թէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը սկսած է հայ ժողովուրդին դէմ եղած կամ կատարուած յանցագործութիւններու պատճառաւ, մեծ նշանակութիւն ունի ապագային արդարութիւն բերելու մեր ժողովուրդի իրաւունքներուն:

Մեր անթիւ թշնամիներու կողքին պէտք է ընդունինք, որ ունինք նաեւ անթիւ բարեկամներ, որոնք ձեռք կու տան մեզի՝ ազգերու պատուանդանին վրայ կանգնելու հզօր, ուղիղ ու բարձր: Ամերիկայի եւ Ֆրանսայի ջանքերով մեզի ի նպաստ շարժող Եւրոպան կը վերականգնեն մեր տնտեսութիւնը եւ կը ձերբազատեն մեզ բացարձակապէս Ռուսիոյ կախածութենէն, եւ աշխարհին մենք կը նայինք 360 բոլորակաձեւ աստիճանով ու հայեացքներով:

Ուրեմն դո՛ւրս ելլենք այս խաւարէն, յուսալքութենէն եւ պարտուածի մեր այս հոգեբանութենէն ու պայծառ ապագայի տեսիլքով նետուինք դէպի ազգային վերաշինութեան եւ վերականգնումի բարձունքներն ի վեր: Այն միասնականութիւնն ու համախմբուածութիւնը, որ մեր ազգը ցուցաբերեց Արցախի պատերազմի օրերուն, պէտք է շարունակուի՝ շինելու համար այն ինչ, որ աւերուեցաւ, վաստակելու համար պատիւ եւ արժապանատուութիւն, որ մարտուեցաւ: Ուրիշին կողմէ մեզի պարտադրուած իշխանափոխութիւնը եւ խիտ շարքերու բաժանումը տեսնելու քաղաքականութիւնը չյաջողցնենք: Պղտոր ջուրի մէջ ձուկ որսացողներու ետեւէն քայլելով՝ չտկարացնենք մեր վերականգնումի սրբազան ուժն ու եռանդը:

Մեր բոլոր նահատակներուն եւ մանաւանդ մեր նահատակ մատղաշ ու պատանեակ բալիկներու յիշատակին առջեւ խոնարհելով՝ երդում տանք, որ անոնց նուիրուածութիւնը՝ հայրենիքի փրկութեան համար, երբեք պիտի չմոռնանք, եւ ամէն անգամ, որ բան մը շինենք կամ ստեղծենք կամ յօրինենք «ի փառս ազգի ու հայրենեաց», անոնց երկրային շիրմաքարերը Քրիստոսի շիրմաքարին պէս պիտի մէկտէ շարտենք՝ յարութիւն տալով անոնց: Ու երկնային արքայութենէն երբ անոնք վար նային մեզի, տանք իրենց ուրախութիւնն ու երջանկութիւնը արժանաւոր նուիր եալներու նոր սերունդներ տեսնելու:

Ես «Փաշինեանական» Չեմ Այլ՝ «Հայրենիքական»

ԵԴԻԱՐԴ ԵՐԻՑԵԱՆ

Անկախ ամէն ինչից, անկախ նրանից որ պատերազմի եւ պարտութեան համար ով կամ ովքեր են մեղաւոր, Հայաստանը այս երկու տարիների ընթացքում ձեռքբերումներ է ունեցել, որոնց պահպանումը էական եւ նոյնիսկ ճակատագրական նշանակութիւն ունեն:

Հիմա Հայաստանը ժողովրդավարական երկիր է, պետութեան գործունէութիւնը թափանցիկ է կայ խօսքի եւ ցոյցերի ազատութիւն եւ համարեայ թէ բացակայում է կաշառակերութիւնն ու պետական միջոցների իւրացումը:

Մամուլի ազատութեան օրինակով կարելի է խօսքի ազատութիւնը տեսնել:

Հեռուստատուլիքներից հետեւեալները ընդդիմութեանն են պատկանում, Արմէնիայ, Շանթ, Երկրորդ Ալիք, Արմէյուզ, Երկիր Մեդիայ, Կենտրոն, Ա թի վի, Ե-րդ Ալիք, Շողակաթ: չէզոք կարելի է համարել Ար-ին եւ Դար 21-ին, իսկ մասամբ իշխանամէտ Նոր Հայաստանն ու հանրային հեռուստաընկերութիւնը: Տպագիր մամուլի մեծ մասը եւս ընդդիմութեան վերահսկողութեան տակ է:

Յեղափոխութիւնից յետոյ առարկութիւն չի եղել ոչ մի ընտրութեան նկատմամբ:

Կապանում եւ Աբովեանում պարտուել են իշխանամէտ թեկնածուները եւ ընդդիմադիր թեկնածուներն են ընտրուել որպէս քաղաքապետ:

Ցոյցերի ազատութիւնը նոյնիսկ ճանաչողութեան է հասնում: Այն անգամանքը որ ցոյցը իրագրեկաւ չէ քաղաքապետարանի մօտ, որ օրէնքի պահանջ է, արգելք չի հանդիսանում որ այն կայանայ: Նախկինների ժամանակ չէր թույլատրուում ցոյցի վայրում վրաններ տեղադրել, հիմա թույլատրուում է: Առաջ այն ժամանակուայ ընդդիմադիրների ցոյցերի ժամանակ ոստիկանութիւնը փակում էր Երեւան հասնող ճանապարհները, հիմա չեն

փակում:

Պետական ծառայողների աշխատավարձերն են բարձրացել, մինչեւ 18 տարեկան երեխաների բուժումը, սրտի եւ ուղեղի կաթուածների բուժումը պետութեան հաշուին են, նորածինների համար միանուագ վճարը կրկնապատկել է: Գիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան զարգացման համար պետական ֆինանսական օգնութեան բազմապիսի ծրագրեր են իրագործուում: Ճանապարհներ են կառուցուում, բարեկարգուում եւ արտօնութիւններ են ստանում սահմանամերձ գիւղերը: Անտառները չեն հատուում: Բանտարկեալների թիւը մօտ 40 տոկոսով պակասել է: Եւ այսպէս շարունակ:

Այս ամէն, անցեալի համեմատ լրացուցիչ ծախսերը հնարաւոր է եղել կատարել, օրէնքի համապատասխան հարկեր գանձելով եւ պետական միջոցների իւրացման առաջն առնելով:

Ինչու է այս ամէնի պահպանումը ճակատագրական: Անցեալում երկրից արտագաղթում էր տարեկան 30-ից 40000 մարդ, հիմա՝ շատ աւելի քիչ: Եթէ նորից անցեալին վերադառնանք, 20 տարի յետոյ հնարաւոր չի լինի պետականութիւնը պահպանել:

Եթէ արտահերթ ընտրութիւնները կազմակերպեն վազգէն Մանուկեանի թիկունքում կանգնած 16 կուսակցութիւնները՝ մենք կրկին կ'ունենանք չընտրուած խորհրդարաններ եւ չընտրուած վարչապետեր, թերկատարող հարկահանութիւն եւ պետական միջոցների համատարած թալան, կաշառակերութիւն եւ դատական անարդարութիւն: Այլ թեկնածու, որ ուզի ժողովրդավարութիւնը պահպանի ընտրուելու շանս չունի:

Հետեւաբար անկախ ամէն ինչից այս իշխանութիւնը պիտի մինչեւ արտահերթ կամ հերթական ընտրութիւններ գործի, այլ ելք չկայ:

Ես «Փաշինեանական» Չեմ Այլ՝ «Հայրենիքական»:

Թրամփը Պաշտօնագրկելու

Շարունակուած էջ 1-էն

զահը՝ ամբոխը ապստամբութեան դրդելու մէջ:

Ներկայացուցիչներու Տան եւ Ծերակոյտի նստավայր ու Ամերիկեան պետութեան խորհրդանիշ Քափիթոյի շէնքէն ներս ներխուժողները կը փորձէին արգիլել ձօ Պայտրոնի ընտրութեան վերջնական հաստատումը, որու արարողութիւնը տեղի կ'ունենար այդ պահուն:

Քափիթոյի վրայ յարձակումէն առաջ ժողովուրդի առջեւ իր ունեցած ելոյթի ընթացքին Թրամփի արտասանած խօսքերը նկատուեցան ամբոխը հրահրող ու ապօրինութիւններուն մղող ելոյթ:

Թրամփի կողմնակիցներուն մէջ մեծ թիւ կը կազմեն աջ ծայրայեղականները՝ ցեղապաշտ սպիտակներ, նոր նացիներ եւ դավադրական տեսութիւններու հաւատացողներ:

Տանտր թրամփի այսպիսով կը դառնայ Ամերիկայի պատմութեան առաջին նախագահը, որ երկու անգամ կ'ենթարկուի պաշտօնազրկումի գործընթացին: Ներկայացուցիչներու կողմէ հաստատուել է ետք Ծերակոյտին ներս տեղի կ'ու-

նենայ դատավարութիւնը, որու աւարտին Ծերակոյտի անդամներու 2/3-րդի հաւանութեամբ նախագահը կը հեռացուի եւ իր տեղը կու գայ փոխ նախագահը:

Բնականաբար, մինչեւ Յունուար 20-ը, երբ կ'աւարտի Թրամփի պաշտօնավարումը, շատ կարճ ժամանակ կայ այս բոլոր քայլերը իրագործելու համար:

Դեմոկրատները կը պնդեն որ, իշխանութիւնը իւրացնելու Թրամփի փորձը պէտք է անհետեւանք մնայ: Ան պէտք է պաշտօնագրկումի ենթարկուի նոյնիսկ Սպիտակ Տունէն հեռանալէն ետք, որպէսզի արգիլուի անոր այսուհետեւ որեւէ պետական պաշտօնի ձգտիլ: Թրամփի նպատակ ունի 2024-ին դարձեալ ներկայացնել իր թեկնածութիւնը՝ նախագահի պաշտօնին:

Յիշեցնենք որ, Քափիթոյի շէնքը վերջին անգամ յարձակումի ենթարկուած էր 1814-ին, Միացեալ Նահանգներու եւ Մեծն Բրիտանիոյ միջեւ 1812-ին սկսած պատերազմի աւարին, երբ Բրիտանական զօրքերը, գալով Գանատանայ գրաւեցին մայրաքաղաք Ուաշինկթընը եւ կրակի տուին Քափիթոյի շէնքը:

Քովիտ-19 Համավարակի Նոր Չարագացումները

Մեծ Բրիտանիա Թոչլատրեց «Moderna» Պատուաստանիւթի Գործածութիւնը

Մեծն Բրիտանիան Թոչլատրեց «Moderna» պատուաստանիւթի գործածութիւնը քորոնա ժահ-րին դէմ:

Նշենք նաեւ որ քորոնա ժահ-րի դէմ «Moderna» ընկերութեան պատուաստանիւթի օգտագործումը Թոչլատրուած է նաեւ Եւրոպական Միութեան տարածքին:

Մեր ընթերցողներուն ծանօթ է «Moderna» պատուաստանիւթի ստեղծողն է աշխարհահռչակ հայ գործարար Նուպար Աֆէեանի հիմնադրած «Moderna Therapeutics» կենսա-արհեստագիտական ընկերու-



Թեիւնը: Սոչն պատուաստանիւթի օգտագործումը Թոչլատրուած է նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ:

Հիւանդանոցային Մահճակալներու Սոսկալի Պակաս Գալիֆորնիոյ Մէջ



Քորոնա ժահրի արագորէն տարածուելուն պատճառով Գալիֆորնիոյ հիւանդանոցները լեփ լեցուն են եւ սարսափելի պակաս մը կայ մահճակալներու: Իսկ խտացեալ հիւանդութեանց դարմանումի բաժիններուն մէջ մեծ տափնակայ օդափոխիչ սարքաւորումներու եւ թթուածին ներմուծող գործիքներու: Լոս Անճելոս եւ Ֆրեզնո գաւառներու մէջ շատ մը հիւանդներ չեն ընդունուած, օդափոխիչներու եւ մահճակալներու պակասի պատճառով: Ոմանք տուն առաքուած են տնային դարմանումի

ենթարկուելու, որուն արդիւնաւետութիւնն ալ այդքան դրական չէ: Գալով քորոնայի դէմ պատուաստանիւթին՝ Գալիֆորնիոյ համար նախատեսուածը՝ առ այժմ պիտի տրամադրուի հիւանդանոցային համալիրներու եւ բժշկական ու առողջապահական ոլորտներու մէջ աշխատողներու: Իսկ երկրորդ հանգրուանին պատուաստանիւթերը պիտի բաժնուին ծերանոցներուն եւ հանգստեան տուններուն: Երրորդ հանգրուանին՝ 65-էն վեր տարիք ունեցողներուն եւ ապա՝ ցանկացողներուն:

Ամենամօթին Օրեր Լոս Անճելոսի Մէջ



Լոս Անճելոսի հանրային հիւանդանոցի բժշկիկներէն մին ըսաւ թէ «պատերազմի գոտի» է կարծէք քանի որ քորոնային մահացողներու թիւը աներեւակայ խորէն բարձր է, հակառակ անոր որ հարկ եղած անխոնջ աշխատանքները կը տարուին անվատ կերպով: Նոչն հոգածութիւնը ցոյց կը տրուի նաեւ UCLA հիւանդանոցի բուժֆոյրերուն կողմէ: Մահճակալներու թիւի գրգռի պակասի բերումով, շտապ օգնութեան ինքնաշարժերը երկարատեւ հերթի կը սպասեն: Պատահած է որ հիւանդ մը 17 ժամ

մնայ ինքնքշարժին մէջ: Լոս Անճելոս գաւառի մէջ անցեալ շաբաթ օրական 200 մահ արձանագրուած է, իսկ թաղումներուն համար մեռելատուներուն մէջ սպասումի երկար հերթեր կան: Խճողումը շատ մեծ է նաեւ դիտարաններուն (մորկ) մէջ: Ներկայիս Գալիֆորնիոյ բուժֆոյրերուն համար իւրաքանչիւր սահմանուած չորս հիւանդի օրէնքը՝ առժամաբար փոխարինուած վեց հիւանդի:

Իրապէս մղձաւանջային օրեր քովիտ համավարակի պատճառով:

Արցախեան Պատերազմէն Յետոյ ՄԱԿ-ի Գործակալութիւնները Եւ Գործընկերները Աջակցած Են Աւելի Քան 17 Հազար Մարդու



ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը, մարտական գործողութիւններու սկիզբէն մինչ այժմ, աջակցութիւն տրամադրած է Լեռնային Ղարաբաղէն եւ շրջակայքէն տեղահանուած մարդոց եւ Հայաստանի հիւրընկալող համայնքներուն՝ աջակցելով շարք մը առաջնային կարիքները հոգալու հարցին մէջ: ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը կը տեղեկացնէ, որ ՄԱԿ-ի գործակալութիւնները եւ գործընկերները տրամադրած են 33 հազար 330 ոչ-պարէնային ապրանք, հարիւրաւոր թոն պարէնային օգնութիւն՝ 17 հազար 965 մարդու: Կարիքաւոր ընտանիքներուն տրամադրուած են անկողնային, առողջապահական մաքրութեան պարագաներ, սրբիչներ, կենցաղային իրեր, բարձեր ու ձմեռնային ծածկոցներ:

Ստեղծուած է երեխաներու պաշտպանութեան թէժ գիծ եւ ընկերային ծառայութեան մասնագէտներու օգնութեան գիծ, որոնք կը տրամադրեն շուրջօրեայ խորհրդատուութիւն երեխաներու պաշտպանութեան դէպքերու վերաբերեալ:

Ընկերային ծառայութեան 940 մասնագէտ (ընկերային աշխատողներ, ուսուցիչներ, դպրոցական հոգեբաններ, երիտասարդներու հետ աշխատող մասնագէտներ) վերապատրաստուած են ձեռք բերած են անհրաժեշտ հմտութիւններ՝ առաջին հոգեբանական օգնութիւն եւ հոգեկան առողջութեան ուղղուած աջակցութիւն: 355 երեխայ, 520 դեռահաս եւ 394 ծնող օգտուած են հոգեկան առողջութեան եւ հոգեբանական աջակցութեան, ընդ որում՝ անհատական եւ խմբային միջամտութիւններու, արուեստի եւ

երաժշտութեան միջոցով: Լեռնային Ղարաբաղէն 25 դեռահաս վերապատրաստուած է որպէս հասակակիցներուն աջակցութիւն տրամադրող կամաւոր՝ դեռահասներուն շարունակական հոգեկան առողջութիւն եւ հոգեբանական ընկերային աջակցութիւն ապահովելու համար: Առաւել խոցելի դեռահասներուն տրամադրուած է արուեստով զբաղելու 100 հաւաքածոց:

Կրթութեան կարիքները հոգալու համար՝ աջակցութիւն ցուցաբերուած է Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած 11.500 դպրոցահասակ երեխաներու, որոնք ներկայիս միջնակարգ կրթութիւն կը ստանան Հայաստանի մէջ:

Կրթութեան կարիքները հոգալու համար՝ աջակցութիւն ցուցաբերուած է Լեռնային Ղարաբաղէն տեղահանուած 11.500 դպրոցահասակ երեխաներու, որոնք ներկայիս միջնակարգ կրթութիւն կը ստանան Հայաստանի մէջ:

ՄԱԿ-ը եւ գործընկերները նաեւ աջակցած են Առողջապահութեան նախարարութեան՝ ՀՀ քաղաքացիներուն եւ Լեռնային Ղարաբաղէն ժամանածներուն առողջապահական ծառայութիւններ մատուցելու ջանքերուն: Մասնաւորապէս, նախարարութեան տրամադրուած է 100 թթուածինի խտանիւթ եւ COVID-19-ի դէմ պայքարին անհրաժեշտ այլ պարագաներ: Բացի այդ, Միացեալ Թագաւորութենէն Հայաստան ժամանած էր բժշկական շտապ օգնութեան խումբ՝ աջակցելու Վարակիչ Հիւանդութիւններու Ազգային Կեդրոնին մէջ եւ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կեդրոնին մէջ Գորոնա ժահրի հիւանդութեան ծանր եւ ծայրայեղ ծանր դէպքերը կառավարելու եւ համավարակի դէմ պայքարի գործին մէջ:

Պէյրուքի Օդակայանն ու Լիբանանը Ամբողջական Փակումի Ենթարկուած

21 Փետրուարէն ի վեր Լիբանանի մէջ քորոնա ժահրէն վարակուած է 210,139 հոգի: Իսկ անցնող շաբթուան ընթացքին արձանագրուեցան վարակումի նոր մրցանիշներ: Մահացողներու թիւն ալ սկսած է բարձրանալ (օրական 15-20 պարագայ): Այս առթիւ պաշտօնական եւ առողջապահական շրջանակներ կոչ ուղղեցին Պէյրուքի օդակայանն ու բովանդակ Լիբանանը, փակ պահել 7 օրուան համար, քանի որ Լիբանան հասած է ամենէն վտանգաւոր փուլին, որուն ընթացքին կրնայ առողջապահական աղէտ արձանագրուիլ:



Պէյրուքի կառավարական հիւանդանոցի տնօրէնը Ֆիրաս Ապիատ նշեց որ պահանջուածը՝ նոր ուղղութիւն եւ նոր ու խիստ գործելաոճ երկիրը փրկելու համար:

Արցախի Մէջ Նոր Շէնքեր Կը Կառուցուին, Բնակարաններու Կը Վերափոխուին Տարբեր Նշանակութեան Շինութիւններ



Արցախի մէջ սկսած է պատերազմի հետեւանքով վնասուած ընդհանուր առմամբ մօտ 453 բնակելի առարկաներու վերականգնման շինարարական աշխատանքը, որմէ աւելի քան 250-ը աւարտած է: Այս մասին տեղեկացուցած է քաղաքաշինութեան փոխնախարար Ազատ Համբարձումեան:

«Վերականգնման շինարարական աշխատանքները կ'ընթանան երկու փուլով: Առաջին փուլին վերանո ըրողած են բնակելի տուններու տանիքները, տեղադրուած դուռեր ու պատուհաններ, ստեղծուած են ջեռուցման պայմաններ: Այս տարուան Յունուարէն սկսեալ կը կատարուին ներքին յարդարման աշխատանքներ՝ վերջնական աւարտելով այդ բնակարաններուն վերականգնումը: Պատերազմի հետեւանքով վնասուած տուններու վերականգնումը կը շարունակուի ըստ հերթացուցակներու՝ առաջնահերթութիւնը կը տրուի զոհուածներու եւ անյայտ կորսուածներու ընտանիքներուն», մանրամասնեց Համբարձումեան:

Ըստ փոխնախարարին՝ մասնաւորապէս Ստեփանակերտի մէջ պատերազմի հետեւանքով վնասուած տուններու վերաբերեալ Քաղաքաշինութեան նախարարութիւնը

ստացած է աւելի քան 3680 դիմում, որմէ ուսումնասիրուած է մօտ 1500-ը: Վերականգնման աշխատանքներ սկսած են 329 առարկայի, որմէ շինարարական աշխատանքները առաջին փուլով աւարտած են 211-ին մէջ, իսկ 118-ին՝ ընթացքի մէջ են:

«Մարտակերտի շրջանին մէջ ընդհանուր առմամբ վնասուած է 370 առարկայ, որմէ 320-ը Մարտակերտի մէջ, միւսները՝ գիւղական բնակավայրերու մէջ: Առանձնապէս տուժած են Աղաբեկալինջ, Մաղաուզ, Յոռաթաղ, Մեծ շէն գիւղերը: Մարտակերտի շրջանին մէջ արդէն ուսումնասիրուած է պատերազմի հետեւանքով վնասուած 62 առարկայ: Այնուհետեւ սկսած է 32-ին վերականգնումը, 14-ինը աւարտած է: Շուրջ 1300 տուն վնասուած է Մարտունիի շրջանին մէջ: Մասնաւորապէս Մարտունիի մէջ պատերազմի հետեւանքով վնասուած 850 տունէն ուսումնասիրուած եւ գրանցուած է վերականգնման ենթակայ մօտ 170 տուն: Վերականգնման աշխատանքները մեկնարկած են 64-ին մէջ, որմէ 12-ը աւարտած է, իսկ 52-ը ընթացքին մէջ է:

Մարտունիի գիւղերէն հիմնականին մէջ տուժած են Թաղավարդը, Կարմիր Շուկան, Սօսը, Հերհերը եւ Բերդաշէնը:

«Կոմիտաս-150» Յուշադրամը Զբաղեցուցած Է 3-րդ Տեղը «Տարուան Յուշադրամը» Անուանակարգին Մէջ



ՀՀ Կեդրոնական դրամատան կողմէ 2019 թուականին թողարկուած արծաթէ յուշադրամը՝ նուիրուած աշխարհահռչակ հայ երաժիշտ եւ երաժշտագէտ Կոմիտասի ծննդեան 150-ամեակին, Ռուսաստանի Դաշնութեան մէջ տեղի ունեցած «Դրամներու Համաստեղութիւն-2020» 14-րդ միջազգային մրցոյթին՝

զբաղեցնելով 3-րդ տեղը «Տարուան Յուշադրամը» անուանակարգին մէջ: Յուշադրամի էսքիզներու հեղինակներն են Վարդան Վարդանեանը (դիմերես) եւ Էտուարտ Կուրդիանեանը (դարձերես): Յուշադրամը հատուած է Լիթուանիոյ դրամահատարանին մէջ:

Տէր Նարեկ Քինյ. Մատարեան Քորոնայի Դարմանումի Տակ

Լաս վեկասի Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ նախկին հովիւ Արժ. Տ. Նարեկ Աւ. Քինյ. Մատարեան, շուրջ երկու շաբաթէ ի վեր վարակուած ըլլալով քորոնա ժահրէն այժմ ենթակայ է լուրջ դարմանումի: Կ'իմանանք թէ երէցկին Պայծառն ու ընտանիքի միւս անդամներն ալ ազդուած են սոցն համավարակէն եւ ենթակայ ինքնամեկուսացումի ու դարմանումի, որ կ'ընթանայ բնականոն ձեւով:

Կը սիրենք յուսալ որ սիրելի Տէր Հայրն ու ընտանիքի անդամները, կարճ ժամանակի մէջ, կ'ապաքինուին ու կը վերագտնեն իրենց նախկին առողջութիւնը:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Լիբանանի Տիրուհի Ուսանողական եւ Երիտասարդական Միութեան երկարամեայ վարչութեան անդամ ընկ. Անդրանիկ Ուղուրլեանի մահուան առթիւ, մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի հարազատներուն, ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ. Տիրուհի Ուսանողական Միութեան վարչութեան:

Ընկ. Անդրանիկ Ուղուրլեան նուիրեալ եւ պարտաճանաչ Հնչակեան եւ Տիրուհի Ուսանողական Միութեան վարչութեան լաւագոյն անդամներէն մին էր:

Վահէ Աջապահեան

Աւետիք Աւետիս Տրդատեանի Յիշատակին

Մայրս՝ Ակիւլինէ Տրդատեան Թաթուլեան ծնած է Կիլիկիոյ Հաճըն քաղաքը: Իր հայրը Աւետիք Աւետիս Ատանայի Չարդերուն, որպէս Հնչակեան գործիչ, կը մեկնի Ատանա: Երբ թուրք կառավարութիւնը կը տեղեկանայ որ Հաճընէն, խումբ մը եկած են Ատանա, անմիջապէս կը ձերբակալուին Հնչակեան գործիչները եւ կը դատաւարուին մահուան:

Մայրս՝ Ակիւլինէն ութ տարեկան էր երբ հայրը սպաննուեցաւ Ատանայի մէջ:

Նոյն տարին մօրս կը զրկեն Պոլիս եւ կ'ընդունուի աղջկանց որբանոց-դպրոցը, ուսումը շարունակելու: Դպրոցի վերակացուն՝ Քաջն Մուրատի կողակիցն էր Ակիւլինէ Պօյաճեան:

Երբ այսօր մտածմունքի մէջ էի միտքս ինկաւ մեծ հայրս, իմ ծնունդէս շատ տարիներ առաջ: Աւետիք-Աւետիսը մեկնած էր Ատանա, իր գորակցութիւնը բերելու Հնչակեան գաղափարախօսութեան իր հաւատարիմ ընկերներուն:

Թուրքի անողոք, չարամիտ գործերու զոհը գացին ինքը եւ իր հնչակեան ընկերները:

Հանգիստ իր ոսկորներուն
Թաթուլեան Ընտանիք

Զարմանազան 2021 Արձանագրութիւնները Սկսած Են

«Զարմանազան» 2021՝ արեւմտահայերէտով ամառնային ծրագիրը նախատեսուած է որ տեղի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներու Օթ-Սաւուա շրջանը, Յուլիս 12-էն մինչեւ Օգոստոս 7:

Ծրագիրը ունի երեք բաղադրիչներ որոնք սերտօրէն առնչուած են իրարու.

-10-էն 17 տարեկան պատանիներու համար նախատեսուած ծրագիր մը:

-18-էն 24 տարեկան երիտասարդներու համար նախատեսուած ծրագիր մը:

Պատանիները եւ երիտասարդները իրենց տարիքին համաձայն զանազան աշխատանոցներու պիտի մասնակցին, ի շարս որոնց՝ տեսողական եւ լատեսողական արուեստներ, արհեստներ, երաժշտութիւն, մարմնային եւ թատերական արտայայտութեան զարգացում, ազատ գրութեան եւ գրական ընթերցումներու նուիրուած նիստեր, խմբային խաղեր, բնութեան մէջ պտոյտներ եւ ճամբորդութիւններ:

Բոլոր նիստերուն ու աշխատանոցներուն ընթացքին՝ յարաբերութեան եւ հաղորդակցութեան լեզուն պիտի ըլլայ հայերէնը,

մասնագէտ ու տաղանդաւոր ուղեկիցներու ներկայութեամբ: Երիտասարդներու խումբին մասնակիցները պէտք է առնուազն միջին մակարդակով հայերէն գիտնան:

Այս երկու ծրագիրներու մասնակիցներուն թիւը սահմանափակ է:

Համալսարանական ծրագիր մը, ուղղուած Սփիւռքի արեւմտահայերէնի ուսուցիչներուն:

Սփիւռքեան խտացեալ ծրագիր մըն է այս մէկը, որուն աւարտին Փարիզի Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկը (Ինալքօ) կու տայ վկայագիր մը: Ծրագիրը, զոր պիտի վարեն մասնագէտ դասատուներ, կ'առաջարկէ թէ՛ տեսական դասաւանդութիւն մը եւ թէ՛ վերապատրաստութեան խմբային աշխատանքներ: Այս ծրագրին կ'ընդունուի միայն 15 ուսուցիչ:

Զարմանազանը այն վայրն է, ուր ծրագրի մը շուրջ կը հաւաքուին Սփիւռքի երեխաներ, երիտասարդներ, ուսուցիչներ եւ ուղեկիցներ:

Արձանագրութեան եւ այլ տեղեկութիւններու համար այցելեցէք կայքէջը՝ www.zarmanazan.com.

«Դրամներու Համաստեղութիւն-2020» մրցոյթին մասնակցելու յայտով դիմած են 26 կազմակերպութիւն 17 երկիրներէ՝ ներկայացնելով 2019 թուականին

թողարկուած 159 յուշադրամ: Յաղթող յուշադրամները ընտրուած են միջազգային դատակազմի քուէարկութեան արդիւնքներով:

Ռոմալոն Ռեկորդ Սահմանած Է Եւրոպայի 5 Գլխաւոր Լիկաներու Մէջ

Թուրքիի «Եոլվենտուսի» փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոմալոն իտալիոյ առաջնութեան 17-րդ հանգրուանին «Մասուոլոյի» դարպասը նշանակած կողի շնորհիւ սահմանած է հերթական մրցանիշը:

35-ամեայ փորթուկալացին պատմութեան առաջին ֆուտպոլիստն է, որ Եւրոպայի գլխաւոր 5 առաջնութիւններուն (Անգլիա, Սպանիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսա) նուազագոյնը 15 կոլ նշանակած 15-րդ մրցաշրջանի անընդմէջ:



Յիշեցնենք, որ Ռոմալոն նշանակած էր մարզային կեանքի 759-րդ կոլը կրկնելով չեխական ֆուլթպոլի աստղ՝ Յոզեֆ Բիցայի ընթացքին պաշտօնական խաղերուն նշանակած կոլերու համախարհային մրցանիշը: Այդ ցուցանիշով երրորդ տեղը կը գրաւէ պրագիլացի աստղ՝ յարձակող Բեյէն, որ 812 պաշտօնական խաղերու ընթացքին նշանակած է 757 կոլ: Ռոմալոն Լիգայոնի «Սպորտինգի», մէջ անգլիական «Մանչեսթեր Եունայթեմի», Մատրիդի «Ռէալի», «Եոլվենտուսի» եւ Պորտուգալիայի հաւաքականի հետ մասնակցած է 1034 հանդիպումի:

«Ռոմա» - «Ինտեր»՝ 2:2 Մխիթարեանը՝ Կոլային Փոխանցման Յեղինակ



Իտալիոյ առաջնութեան 17-րդ հանգրուանին «Ռոման» սեփական դաշտի վրայ մրցեցաւ Միլանի «Ինտերի» հետ: Արձանագրուեցաւ ոչ ոքի՝ 2:2 արդիւնք:

Դաշտի տէրերը խաղի հաշիւը բացին 17-րդ վայրկեանին: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի փոխանցումէն յետոյ աչքի ինկաւ «Ռոմայի» իտալացի կիսապաշտպան Լորենցո Պելեկրինին:

31-ամեայ Մխիթարեանը 8-րդ կոլային փոխանցումը կատարեց իտալիոյ ընթացիկ առաջնութեան ընթացքին եւ լաւագոյնն է այդ ցուցանիշով:

Երկրորդ խաղակէսին հիւրերը կարողացան վերականգնել հաւասարութիւնը 56-րդ վայրկեանին: Սլովակ պաշտպան Միլան Շկրինյարը գրաւեց սպանացի Պաու Լոպեսի պաշտպանած դարպասը:

Իտալացի Անտոնիո Կոնտէի գլխաւորած խումբի երկրորդ կոլը 63-րդ վայրկեանին նշանակեց պաշտպան Աշրաֆ Հաքիմին (Մորոքքօ):

«Ռոման» պարտութիւնէն խուսափեցաւ իտալացի պաշտպան Ջանլուկա Մանչինիի կողի շնորհիւ 86-րդ վայրկեանին:

«Ինտերը» 37 կէտով երկրորդ տեղը կը գրաւէ եւ 3 միաւոր ետ է առաջատար «Միլանէն»: «Ռոման» երրորդն է՝ 34 կէտով:

Միւս կողմէ կը հաղորդուի որ, Հենրիխ Մխիթարեան եւ իտալական «Ռոման» փոխհամաձայնութեան եկած են գործող պայմանագիրը մէկ տարիով երկարաձգելու շուրջ: Այդ մասին Թուրքիոյ վրայ գրած է իտալացի յայտնի լրագրող Ֆապրիցիօ Ռոմանոն:

31-ամեայ ֆուտպոլիստի նոր պայմանագիրը կը տեւէ մինչեւ 2022-ի ամառ: Այս մրցաշրջանի վերջաւորութեան Մխիթարեան չստանար ազատ գործակալի կարգավիճակ:

ՊՍԺ-ը Յաղթեց Խոշոր Յաշուով Եւ Սօսեցաւ Առաջատար «Լիոնին»

Ֆուլթպոլի Ֆրանսայի առաջնութեան 19-րդ հանգրուանին ՊՍԺ-ը սեփական դաշտին վրայ 3 անպատասխան գնդակ ուղարկեց «Պրեստի» բերդը: Այդ արժանիքինցի մասնագէտ Մաուրիսիօ Պոչետինոյի առաջին յաղթանակն էր ՊՍԺ-ի գլխաւոր մարզիչի պաշտօնին վրայ:

Առաջատար «Լիոնը» 2:2 արդիւնքով աւարտեց «Ռենի» դէմ արտագնայ խաղը՝ պարտութենէն խուսափելով վերջնամասին:

«Լիոնը» ունի 40 կէտ, իսկ ՊՍԺ-ը ետ է մէկ կէտով ու կը գրաւէ երկրորդ տեղն է:

Ճափոնի Բնակչութեան 80.1 Տոկոսը Դէմ Է Ողիմպիական Խաղերու Կայացման

Ճափոնի բնակչութեան 80.1 տոկոսը դէմ է 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու կայացումը՝ համավարակի պայմաններուն մէջ: Այդ մասին կը վկայէ Kyodo գործակալութեան հեռախօսազանգերով կատարած հարցախոյզը:

Հարցումներուն պատասխանողներու 35,3 տոկոսը կողմ արտայայտուած է Թոքիօ-2020 Ողիմպիական խաղերու չըլլալուն, իսկ 44,8 տոկոսը կը կարծէ, որ մրցումները դարձեալ պէտք է յետաձգուին:

Յիշեցնենք, որ քորոնավարակի պատճառով Թոքիօ-2020 Ողիմպիական խաղերը յետաձգուած էին մէկ տարիով եւ պիտի կատարուէին 2021թ. Յուլիսի 23-էն Օգոստոսի 8-ը:



Այս պահուն Հայաստան ունի 4 ողիմպիական ուղեգիր, երկուքը՝ յունահունձեական ըմբշամարտ (Կարապետ Չալեան, 77 կգ, Արթուր Ալեքսանեան, 97 կգ), մէկական՝ սպորտային մարմնամարզութիւնում (Արթուր Դաւթեան) ու բռնցքամարտիկ (Կորիւն Սողոմոնեան, 52 կգ):

«Ռեալ Մատրիտը» Միաւորներ Կորսնցուց

Ֆուլթպոլի Սպանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին Մատրիտի «Ռէալը» չկարողացաւ յաղթել Պամպլոնայի «Օսասունային» ու խաղը աւարտեցաւ առանց կոլերու:

«Ռէալը» 18 խաղէն յետոյ ունի 37 կէտ եւ 1 կէտով ետ է առաջատար Մատրիտի «Աթլետիկոյէն», որ 3 հանդիպում պակաս ունի: Լաւագոյն եռեակը եզրափակող կատարողական «Պարսելոնան» եւս խաղցած է 18 հանդիպում եւ ունի 34 միաւոր:

Մեսիի Երկու Կոլերը Եւ «Պարսելոնայի» Վստահ Յաղթանակը



Ֆուլթպոլի Սպանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին կատարողական «Պարսելոնան» մրցակիցի խաղադաշտին վրայ 4:0 արդիւնքով վստահ յաղթանակ տարաւ «Կրանտաայի» նկատմամբ: Կատարողական ակումբէն երկրորդ խաղի ընթացքին անընդմէջ երկու կոլի հեղինակ դարձաւ արժենիթինցի յարձակող Լիոնել Մեսին, որ 11 կոլով միանձնեայ գլխաւորեց ումբարկուներու ցուցակը: «Պարսելոնայի» միւս 2 կոլերը նշանակեցին ֆրանսացի յարձակող Անտուան Գրիգմանը:

33-ամեայ Մեսին պատմութեան միակ ֆուլթպոլիստն է, որ Լա Լիգայի 10 եւ աւելի կոլ նշանակած է 15-րդ մրցաշրջան անընդմէջ:

Սպանացի կիսապաշտպան Սերխիօ Բուսկետսը 600-րդ պաշտօնական հանդիպումը ունեցաւ «Պարսելոնայի» կազմէն ներս: Ան երրորդ ֆուլթպոլիստն է, որ կատարողական ակումբի մէջ կը հատէ 600 խաղի սահմանագիծը: Այդ ցուցանիշով անոր կը գերազանցեն միայն Անտրէս Ինչեստան (674 խաղ), Լիոնել Մեսին (752) ու Չաւին (767):

Այս յաղթանակէն յետոյ «Պարսելոնան» 34 կէտով բարձրացաւ երրորդ տեղ: «Կրանտաան» 24 կէտով 7-րդն է:

«Պայրըն Միւնիխի» Պարտութիւնը

Գերմանիոյ առաջնութեան 15-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար «Պայրըն Միւնիխը» հիւրընկալուեցաւ «Պորտուա Մոնչէնկլապախ»-էն: «Պայրընը» պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

«Մանչեսթեր Սիթին» ու «Չելսին» Հասան 1/16 Եզրափակիչ

«Մանչեսթեր Սիթին» ու Լոնտոնի «Չելսին» հասան Անգլիոյ գաւաթի 1/16 եզրափակիչ:

Կատարողացի Խոսէպ Գուարդիոլայի գլխաւորած խումբը Մանչեսթերի մէջ ընդունեց «Պրիմինհեմին» եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշիւով: Անգլիացի Ֆրենկ Լեմպարդի գլխաւորած «Չելսին» Լոնտոնի մէջ մրցեցաւ «Մորքամբի» հետ եւ յաղթանակ տարաւ 4:0 հաշուով: